

905

ՀԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂՎՈՄԱՏ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ ԾՐԱԳՐԵՐ

ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ԽՍՀՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VIII—X ԳՕԱՐԱՆՆԵՐԻ ՀՍՄԱՐ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
КОНТРОЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

9(07)  
Մ-73

ԼՈՒՍԺՐՈՍ

ՅԵՐԵՎԱՆ

1939

30 MAY 2011

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Խ Ս Հ Լ ՈՒ Ս Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

9(07)  
Մ-73  
u.s

13 JUL 2005

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

# ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VIII—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լ ՈՒ Ս Հ Ր Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ

1939

Նոր պատմության ծրագիրը միջնակարգ դպրոցի VIII դասարանների համար կազմել են ՌեհմՍՀ լուստոդիոմատի դպրոցների Պետական գիտա-հետազոտական ինստիտուտի գիտական աշխատող Վ. Ա. ՈՐԼՈՎԸ և ՌեհմՍՀ լուստոդիոմատի դպրոցների Պետական գիտա-հետազոտական ինստիտուտի գիտական քոլբակից՝ Ա. Պ. ԱՎԵՐՅԱՆՈՎԸ:

Ծրագիրը խմբագրել է՝ ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի անդամ-քոլբակից՝ Ա. Վ. ՅԵՖԻՄՈՎԸ:

Նոր պատմության ծրագիրը միջնակարգ դպրոցի IX դասարանների համար կազմել են ՌեհմՍՀ լուստոդիոմատի դպրոցների Պետական գիտա-հետազոտական ինստիտուտի գիտական աշխատող Վ. Ա. ՈՐԼՈՎԸ, ՌեհմՍՀ լուստոդիոմատի դպրոցների Պետական գիտա-հետազոտական ինստիտուտի գիտական քոլբակիցներ՝ Ա. Պ. ԱՎԵՐՅԱՆՈՎԸ, Ա. Ի. ԳՈՐՈՂՈՎԸ, Ս. Ս. ՆԻՍԵԼՍՈՎԸ, Ն. Վ. ՊՈՏԱՇԵՎԸ և պատմության ուսուցիչ Վ. Մ. ՆԻԿԻՖՈՐՈՎԸ: Ծրագիրը խմբագրել է պրոֆ. Վ. Մ. ԽՂՈՍՏՈՎԸ:

ԽՍՀՄ պատմության ծրագիրը միջնակարգ դպրոցի VIII-X դասարանների համար կազմել են պրոֆ. Վ. Ն. ԲԵՐՆԱՅԿԻՆ և ՌեհմՍՀ լուստոդիոմատի դպրոցների Պետական գիտա-հետազոտական ինստիտուտի գիտական աշխատողներ՝ Ա. Վ. ՖՈՍՏԸ և Վ. Ս. ԲՐՈՆՇՏԵՅՆԸ:

Ծրագիրը խմբագրել են՝ ԽՍՀՄ գիտությունների Ակադեմիայի անդամ-քոլբակից պրոֆ. Ա. Մ. ՊԱՆԿՐԱՏՈՎԱՆ, պրոֆ. Կ. Վ. ԲԱԶԻԼԵՎԻՉԸ և Ա. Վ. ՖՈՍՏԸ:



6368  
39

# ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## VIII դասարան

### ԲՍՑԱՏՐԱԳԻՐ

ԽՍՀՄ Ժողովրդխորհրդի և ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի 1934 թ. մայիսի 16-ի վերջին մեջ ստված է, վեր անհրաժեշտ է «...քաղաքացիական պատմությունը դասավանդել կենդանի. դրավիչ ձևով, շարագրերով կարևորագույն դեպքերն ու փաստերը ժամանակագրական հաջորդականությամբ, պատմական դործիչները բնութագրումով

...Սովորողները կողմից պատմության դասընթացը հաստատապես յուրացնելու մտահան պայման է հանդիսանում պատմա-ժամանակագրական հաջորդականության պահպանումը պատմական անցքերի շարագրության մեջ, սովորողների հիշողության մեջ անդալման ամրացնելով պատմական կարևորագույն յերեվույթները, պատմական դործիչներին, ժամանակագրական թվականները: Պատմության միայն այսպիսի դասընթացը կարող է ապահովել սովորողներին համար պատմական նյութի անհրաժեշտ մատչելիությունը, ակներևությունը և կոնկրետությունը. այս հիման վրա միայն հնարավոր է պատմական անցքե-

բի ճիշտ վերլուծումը և ճիշտ ընդհանրացումը, վորոնք սովորողներին մոտեցնում են պատմութեան ֆարքսիտական ըմբռնմանը»:

Սա յե հանդիսանում տվյալ ծրագրի հիմնական ընդհանուր դիրքավորումը: Միջնակարգ դպրոցի VIII դասարանի ծրագրերը կազմված և 78 ժամվա համար: 78 ժամից նոր նյութ անցնելու համար հատկացվում է 68 ժամ և կրկնութեան համար— 10 ժամ:

Նոր պատմութեան առաջին շրջանն ընդգրկում է 1789-ից մինչև 1870 թ., այսինքն Ֆրանսիական բուրժուական հեղափոխութեանից մինչև Ֆրանս-պրուսական պատերազմը և Փարիզի կոմունան: Այդ պրուսական պատերազմը և Փարիզի կոմունան: Այդ «կլինի առաջավոր յերկրներում կապիտալիզմի հաղթանակի և հաստատման ժամանակաշրջան»: (Ի. Մապիև, Ս. Կիրով, Ա. Ժոզևով): Նոր պատմութեան առաջին ժամանակաշրջանի ներսում (1789-1870) նյութը բաժանված է յերեք բաժինների. 1-ին— Յեվրոպան և Հյուսիսային Ամերիկան Ֆրանսիական բուրժուական հեղափոխութեանից մինչև 1815 թ., 2-րդ— Վիեննայի համաժողովից մինչև 1848 թ. հեղափոխութեանը (ներառյալ) և 3-րդ— XIX դ. 50-60 թվականները:

Բաժինները բաժանված են թեմաների և նշված են յուրաքանչյուր թեմային հատկացված ժամերը: Այս ծրագրերը նախկին ծրագրերից տարբերվում են ներանով, վոր բացակայում է ամբողջ նյութի բաժանումը դասերի. յենթաթեմաների բաժանումը համապատասխանում է յուրաքանչյուր թեմայի հիմնական մոմենտներին: Ուսուցչին տրվում է վորոշ նախնական մոմենտներին: Ուսուցչին տրվում է վորոշ յենքուրույնութեան, յեղնելով դպրոցի և դասարանի

պայմաններից ու առանձնահատկութեաններից և ընթացիկ մոմենտի պահանջից, նյութն ըստ դասերի բաշխելու համար:

«Նոր պատմութեան» դասընթացի առաջին բաժնի սկիզբը հանդիսանում է XVIII դ. Ֆրանսիական բուրժուական հեղափոխութեանը:

Ներածական մասում— «Յեվրոպան և Հյուսիսային Ամերիկան 1789 թ. բուրժուական հեղափոխութեան նախորդակին»— հարկ չկա մանրամասնորեն կանգ առնել յեվրոպական ցամաքի յերկրների վրա: Յերկրները բնութագրելիս անհրաժեշտ կլինի կանգ առնել այն անցքերի վրա, վորոնք կատարվել են Ֆրանսիական հեղափոխութեանից առաջ, բայց չեն լուսարանված «Միջին դարերի պատմութեան» դասընթացում, այն է. արդյունաբերական հեղաշրջման վրա Անգլիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախութեան համար մղած պատերազմի և կազմավորման վրա: 1870 թ. նախորդակի յեվրոպական յերկրների վիճակի մանրամասն բնութագրութեանը հանդիսանում է «Միջին դարերի պատմութեան» դասընթացի խնդիրը:

Գաղութային և կախյալ յերկրների պատմութեան սխտեմատիկ շարադրումը հանդիսանում է հատուկ դասընթացի խնդիր, վորը դպրոցական ուսումնական պլանի համաձայն պետք է անցվի X դասարանում: Տվյալ ծրագրում տրվում են այն գաղութային և կախյալ յերկրների պատմութեան հիմնական մոմենտները, վորոնք սերտ կերպով կապված են կապիտալիստական յերկրների պատմութեան հետ (հեղափոխութեանը Հարավ-ամերիկական գաղութներում, սի-

պահներէ և տայլիններէ ապստամբությունը) :

«Նոր պատմութեան» դասընթացը դասավանդման մեջ քաղաքական դաստիարակութեան խնդիրները չափազանց մեծ են : Նոր պատմութեան դասադրքի կոնսպեկտի մասին ընկերներ Ստալինի, Կիրովի և ժզանովի ղիտողութեաններում ասված է, վոր հարկավոր է «...ցույց տալ, վոր Ֆրանսիական (և ամեն մի այլ) բուրժուական հեղափոխութեանը ժողովրդին ազատելով Ֆեոդալիզմի ու արսոլյուտալիզմի շղթաներէն՝ նոր շղթաներ է դրել նրա վրա— կապիտալիզմի և բուրժուական դեմոկրատիայի շղթաները, մինչդեռ Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխութեանը ջախջախեց բոլոր ու ամեն տեսակի շղթաները և ժողովրդին ազատեց ամեն ձևի շահագործումէն— ահա, թէ վորը պետք է լինի նոր պատմութեան դասադրքի կարմիր թելը» : Այս դադախարը կարմիր թելով պետք է անցնի նոր պատմութեան առաջին ժամանակաշրջանի բոլոր թեմաներով : Մեծ կարեւորութեան ունի այդ ժամանակաշրջանի լուսաբանութեան համար բոլոր բուրժուական սահմանադրութեաններէ և հաղթանակած սոցիալիզմի Ստալինյան Մահմանադրութեան արմատական սկզբունքային տարբերութեանը վերաբերվող նյութի սղտադործումը դասի ժամանակ : Այդ նույն պլանում էլ դասատուն պետք է ընդդէի արմատական սկզբունքային հակադրութեանը սոցիալիստական ինդուստրիալիզացիայի և կապիտալիստական ինդուստրիալիզացիայի միջև : Հարկավոր է ասել նաև աղգային հարցի սկզբունքային տարբեր լուծման մասին կապիտալիստական

յերկրներում և մեզ մոտ, վորտեղ այդ հարցը լուծված է լինիտրեն, ստալինտրեն :

Նոր պատմութեան առաջին ժամանակաշրջանի մի շարք մոմենտներ կարող են ողտադործվել վորպես կարևոր լծակ ինտերնացիոնալ դաստիարակութեան համար : Որինակ՝ թէ ինչպես անդլիական բանվորները վիժեցրին հողուտ ամերիկական ստրկատերերի անդլիական բուրժուաղլայի կողմից պատրաստած ինտերվենցիան, Մարքսի և Ենգելսի կենսադրութեանները, կոմունիստների Միութեան պատմութեանը, Ինտերնացիոնալի պատմութեանը և մի շարք ուրիշ մոմենտներ պետք է այդ նպատակով ողտադործվեն :

Դասավանդման ժամանակ հարկավոր է ընդդէի ցարիզմի վորպես միջաղգային ժանգարմի դերն Յեկատերինա II ժամանակներից մինչև XIX դարի 50-ական թվականները և այնուհետև :

Անհրաժեշտ է ցույց տալ նաև «արեմտայեվրոպական բուրժուա-հեղափոխական և սոցիալիստական շարժումների դերն ու աղգեցութեանը Ռուսաստանի բուրժուական հեղափոխական շարժման և սղրլետարական-սոցիալիստական շարժման կազմավորման վրա» (առաջին ժամանակաշրջանի համար կարելի յէ ողտադործել Ռադիչչեի, պետրաշչեյցիների, Գերցեյնի, Չերնիշևսկու և Դորբոլյուբովի մասին նյութերը) :

Ինտերնացիոնալ դաստիարակութեան խնդիրների հետ սերտորեն կապված է աշակերտների մեջ այն հարցի ղիտակցման ուժեղացումը, վոր մեր հայրենիքը գտնվում է կապիտալիստական սղակման մեջ և վոր ֆաշիստները մեր սոցիալիստական յերկրի դեմ, վորը հանդիսանում է ամբողջ աշխարհի սղրլետարների

հայրենիքը, պատերազմ են պատրաստում: Հարկավոր է ընդգծել հեղափոխական պատերազմների հերոսականությունը, որինակ, Ֆրանսիայի 1792-94 թ. թ. հեղափոխական պատերազմները: Ղրիմի պատերազմի որինակով կարելի է փայլուն կերպով ցույց տալ, թե ինչպես ցարական Ռուսաստանին հաղթեցին նրա հետամնացությունը:

Մե շարք զլուկներում հարկավոր է լուսարանել, թե ինչպես կապիտալիստական և ֆեոդալական յեղկրներն իրար մոտ լրտեսներ էյին ուղարկում, վնասարարական, դիվերսիոն աշխատանք էյին տանում, որինակ. 1793 թ. նապոլեոնական պատերազմները շրջանում: «Այս հարցի մասին ղեկավարող ցուցումներ են տրված ընկեր Ստալինի ղեկուցման մեջ Համ Կ(բ) Կենտկոմի 1938 թ. մարտյան պլենումում»: Շարադրելով տերմիդորի Գ-ի ղեկները, հարկավոր է ղեկավարել անել և նշավաղել հայրենիքի դավաճան, իմպերիալիստական հետախուզություն սղենտներ, ֆաշիստական արյունարբու շները— տրոցկիստների, աջ և բուրժուական նացիոնալիստները հակահեղափոխական իդեոլոգիական դիվերսիան: Միտամանակ հարկավոր է նկատի ունենալ հակահեղափոխական աջ-տրոցկիստական ղրոկի դատավարություն նյուսթերը:

Շարադրելով բանվորական շարժման պատմությունը, հարկավոր է նկատի ունենալ «Համ Կ(բ) Կ պատմության դասաղբի մասին» նամակում ընկեր Ստալինի տված ցուցումները: Այդ ցուցումները բանալի յեն տալիս մարքսիստներն բացատրելու համար հոսանքների պայքարը կապիտալիզմի ժամանակա-

շրջանում վոչ միայն իՍՂՄ-ի բանվոր դասակարգի մեջ, այլ և ուրիշ յերկրների բանվոր դասակարգի մեջ: Ընկեր Ստալինը գրում է. «Հարկավոր է... վոչ միայն շարադրել այն վատտերը, վորոնք ցուցաղրում են հոսանքների ու ֆրակցիաների առատությունը կուսակցության մեջ և բանվոր դասակարգի մեջ կապիտալիզմի շրջանում իՍՂՄ-ում», այլ և տալ մայր վատտերի մարքսիստական բացատրությունը, այդ վատտերի մարքսիստական դասակարգերի սեմատնանշելով՝ ա) ինչպես նոր, կապիտալիզմի տեսակետից ժամանակակից, դասակարգերի, այնպես սակետից ժամանակակից դասակարգերի առեկ հին, նախակապիտալիստական Ռուսաստանում, կայությունը նախահեղափոխակն Ռուսաստանում, բ) յերկրի մանր բուրժուական բնույթը, գ) բանվոր դասակարգի բաղմալիսի կազմը, վորպես պայմաններ, վորոնք նպաստում էյին բաղմալիզ հոսանքներ, ու ֆրակցիաների ղոյությունը կուսակցության և բանվոր դասակարգի մեջ: Առանց ղրան, ֆրակցիաների և հոսանքների շատությունն անհատկանալի յե դառնում»:

Ուոչոր նշանակություն ունի նաև «Համ Կ(բ) Կ պատմության համառոտ դասընթացի» այն ցուցումների ողտաղործումը, վորոնք անմիջականորեն վերաբերվում են նոր պատմության պրորլեմին, ինչպես, որինակ, ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու հարցերի մասին, արղարացի և անարղարացի պատերազմների մասին, սոցիալիստական հեղափոխության մարքսյան թերիայի և պրոլետարիատի ղիկատատուրայի քաղաքական ձևի մասին և Լենինի ու Ստալինի կողմից այդ հարցերի վերաբերյալ ուսմունքը նոր, բարձրագույն աստիճանի վրա բարձրացնելու մասին:

Նոր պատմութեան դասավանդման ժամանակ ուսուցիչը պետք է նկատի ունենա Համ Կ(բ)Կ ԿԿ-ի ցուցումները «Կուսակցական սկզբնական դասընթացի մասին «Համ Կ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացի» լույս ընծայման կապակցութեամբ» վորոշման մեջ, վորոնք խոշոր սկզբունքային նշանակութեան ունեն նաև ընդհանուր պատմութեան ուսումնասիրման համար:

Հատկապես կարևոր են վորոշման I բաժնի 3 և 4 կետերի ցուցումները կազմերին մարքսիզմ-լենինիզմի իղեաներով դաստիարակելու մասին, և վոր թե անձնավորութեաններին ու նրանց կենսագրութեաններին վրա, անհատի դերի մասին պատմութեան մեջ, արդարացի և անարդարացի պատերազմների մասին, Պոկրովսկու, այսպես կոչված «չկոլայի» կողմից իսկական պատմութեան ազգայնական մասին:

Դասատուն պարտավոր է ոգտագործել այն ամենաարժեքավոր գանձը մարքս-լենինյան ուսմունքի մեջ՝ պետութեան մասին, վորը մուծեց ընկեր Ստալինը իր պատմական ղեկուցման մեջ Համ Կ(բ)Կ XVIII համագումարում:

Այս ծրագրի կառուցվածքը, համեմատած նախկին նախագծերի հետ, սլարդեցված է: Կատարված է փաստերի ընտրութեան և պակասեցված է սովորողներին յուրացմանը յենթակա փաստական նյութի քանակը:

Բայց միևնույն ժամանակ ծրագրի մեջ են մտցված կուլտուրայի պատմութեան հարցեր (տեխնիկայի, բնագիտութեան, փիլիսոփայութեան, դրականութեան պարզացումը և այլն):

Մեծ նշանակութեան ունի իսկական փաստաթղթե-

րից դասավանդումը աշխուժացնող և պատկերավորող հատվածներ բերելը: Մի շարք անցքերի, ճակատամարտերի նկարագրութեաններ, պատմական դործիչների բնութագրութեաններ դասատուն կգտնի ԽՍՀՄ-ի դիտութեաններին Ակադեմիայի պատմութեան Ինստիտուտի կողմից լույս ընծայվող նոր պատմութեան քրեստոմատիայի մեջ:

Պետք է ոգտագործել նաև դեղարվեստական դրականութեանը, որինակ, Առևտուրիցի ճակատամարտի և 1812 թ. պատերազմի մի շարք մոմենտների նկարագրութեանը կարելի յե վերցնել Տոլստոյի «Պատերազմ և խաղաղութեան» դրքից: Խոսելով Տիլզիտյան հաշտութեան մասին, հարկավոր է ոգտագործել «Յեկ-յենիյ Ռեզինի» X դրուիսը (ԽՍՀՄ դիտ. Ակադեմիայի հրատարակութեան մեջ, հատ. 6, էջ՝ 521 և 522, 1 և 2 տունը), ոգտագործել Բալզակի, Դիկենսի, Չոլայի յերկերը, Գարիբալդիի մեմուարները և այլն:

Դասավանդման ժամանակ ուսուցիչը պետք է լայն կերպով ոգտագործի ամեն տեսակի քարտեզներ (պատմական և աշխարհագրական), դիալոգներ և ուրիշ դիտողական ձևանարկներ:

# ԾՐԱԳԻՐ

VIII ԴԱՍԱՐԱՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 Ժամ)

Նոր պատմութիւնը: Նրա շրջանները: Ընկերներ Ստալինը, Կիրովը և Ժդանովը նոր պատմութեան պերիոդիկացիայի մասին:

Վաղ բուրժուական հեղափոխութիւնները՝ նիդերլանդական և անգլիական-նշանակութիւնը: XVIII դ. ֆրանսիական բուրժուական հեղափոխութիւնը վորպես նոր պատմութեան սկիզբ: Բուրժուական հեղափոխութիւններ և Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխութեան արմատական, սկզբունքային հակադրութիւնը վորպես «նոր պատմութեան» զասընթացի սուանկը:

## I Բ Ա Ժ Ի Ն

ՅԵՎՐՈՊԱՆ ՅԵՎ ՀՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՖՐԱՆ-  
ՍԻԱԿԱՆ ԲՈՒՐժՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՆԱ-  
ԽՈՐՅԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ 1815 Թ.

I քեմա— ՅԵՎՐՈՊԱՆ ՅԵՎ ՀՅՈՒՍԻՍՍԱՅԻՆ Ա-  
ՄԵՐԻԿԱՆ ԲՈՒՐժՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՆԱ-  
ԽՈՐՅԱԿԻՆ:

1. Արդյունաբերական հեղաշրջման սկիզբն Անգլիայում: Անգլիայի պայքարը համաշխարհային առաջնութեան համար: Նրա բարձրացումը: Գաղութները զավթում: «... Կապիտալիստական տնտեսաձևի ավելի

կամ պակաս պատրաստի ձևերի» հասունացումը «Ֆեոդալական հասարակութեան ընդերքում» (Ստալին): Կապիտալի կուտակումը: «Յանկապատումը»: Գյուղացիութեան պառուլերի զացիան և պրոլետարացումը: Արդյունաբերութեան Անգլիայում XVIII դ.: Մեքսիկաների գյուղը: Առաջին Փարբիկանները: Նոր, հիմնական դասակարգերի՝ արդյունաբերական բուրժուազիայի և պրոլետարիատի ձևափոխման սկիզբը:

2. Անկախութեան համար մղած պատերազմը և ԱՄՆ-ի կազմավորումը: Գաղութները Հյուսիսային Ամերիկայում XVIII դ. 70-ական թվականներին: Անգլիայի պայքարն ամերիկական զաղութներում արդյունաբերութեան զարգացման դեմ: Անկախութեան համար մղած պատերազմի սկիզբը: Արդարացի և անարդարացի պատերազմները: Անկախութեան ղեկավարացիան (1776 թ. 4/VII) վորպես բուրժուական հասարակութեան մանիֆեստ:

1871 թ. սահմանադրութիւնը: Գեորգ Վաշինգտոնը: Պատերազմական գործողութիւնները ընթացքը: Ֆրանսիայի կողմից՝ ապստամբած զաղութներին սղնկը:

Վերսալի հաշտութիւնը: Պատերազմի հետևանքները ժողովրդական լայն մասսաների համար: Շեյխ ապստամբութիւնը: 1787 թ. ամերիկյան սահմանադրութիւնը: Ամերիկյան սահմանադրութեան և հաղթանակած սոցիալիզմի Ստալինյան Սահմանադրութեան արմատական հակադրութիւնը: Ամերիկական հեղափոխութիւնը վորպես ահազանդ յեվրոպական բուրժուազիայի համար:

II քեմա— XVII Դ. ՖԻԱՆՍԻԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱ-  
ԿԱՆ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԸ (12 ժամ) :

1. Աբսոլյուտա— ֆեոդալական կարգի նգնաժա-  
մը : Ձրանսիան հեղափոխութեան նախորդակին : Կապի-  
տալիստական տնտեսաձևի տարրերի հասունացումը  
Ֆեոդալական Ձրանսիայում : Գյուղացիութեան դրու-  
թյունը : Գյուղատնտեսութեան անկումը և ճղնաժամը :  
Գյուղացիութեան շերտավորումը : Գյուղացիական ա-  
պրտամարտութիւնները :

Արդյունաբերութիւնը . համաբարութիւնները , ար-  
տադրութեան ռեզիւմենտացիան , կապիտալիստական  
մանուֆակտուրան քաղաքում և գյուղում : Արհեստա-  
վորները և քաղաքի բնակիչները ստորին շերտի դրու-  
թյունը : Արտաքին և ներքին առևտուրը : Ֆեոդալական  
հարաբերութիւնները վերստին կապիտալիզմի զարգաց-  
ման արդեւակ : Քաղաքական կառուցվածքը : Լյուդու-  
վիկոս XVI և նրա արքունիքը : Արտոնյալ դասերը՝  
հողերականութիւնը և ազնվականութիւնը : Յերբորդ  
դասը : Բուրժուազիայի տարրեր խմբերի վերաբեր-  
մունքը դեպի արսոլյուտա— ֆեոդալական միապետու-  
թիւնը :

2. Բարձրացող բուրժուազիայի և ժողովրդական  
մասաների գաղափարախոսները : Լուսավորիչ— գրող-  
ները . Վոլտերը , Մոնտեսկիէն : Ենցիկլոպեդիստները .  
Դիդրոն , Ռուսսոն վերստին մանր բուրժուազիայի գա-  
ղափարախոս : Պլեբեյական մասաների գաղափարախոս  
Մեյլեն :

3. Հեղափոխութեան սկիզբը : Խոշոր բուրժուա-  
զիան գավթում և իշխանութիւնը : Ֆինանսական

ճղնաժամը : Գյուղացիական ապստամբութիւնների և  
քաղաքային ճգնաժամների ուժեղացու-  
մը : Տյուրգոսի և Նեկկերի ռեֆորմների վերջը : Գլխա-  
վոր շատաների հրավիրումը : Գլխավոր շատաների վե-  
բաժումն Ազգային ժողովի : Բաստիլիայի դրամումը  
(1789 թ . 14/VII) : Խոշոր բուրժուազիայի կողմից իշ-  
խանութեան զավթումը Փարիզում և պրովինցիայում :

Հեղափոխական շարժումը գյուղում : 1789 թ . «ոգոս-  
տոսի լույս 4-ի դեշերը» : Արքունիքի դավադրութիւ-  
նը : 1789 թ . հոկտեմբերի 5—6 ժողովրդական մասա-  
ների ապստամբութիւնը : Բուրժուական հակահեղա-  
փոխութեան սկիզբը :

Մարդու և քաղաքացու իրավունքները դեկլարա-  
ցիան (1789 թ . 26/VIII) և նրա առաջադիմական պատ-  
մական նշանակութիւնը : Նրա սկզբունքային , արմա-  
տական տարրերութիւնն աշխատավոր և շահագործ-  
վող ժողովրդի իրավունքները 1918 թ . Գեկլաբացիո-  
յից և հաղթանակած սոցիալիզմի Ստալինյան Սահմա-  
նադրութիւնից : 1791 թ . սահմանադրութիւնը : Մար-  
դու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի և  
1791 թ . սահմանադրութեան հակասութիւնները : 1791  
թ . սահմանադրութեան և Ստալինյան Սահմանադրու-  
թեան արմատական հակադրութիւնը :

Սահմանադիր ժողովի տնտեսական ձեռնարկումնե-  
րը : Ձրանսիայի նոր վարչական բաժանումը : Յեկեղե-  
ցական հողերի բռնազրկումը : Ազգային դուլքի վա-  
ճառումը : Ասիդուացիաներ : Սահմանադիր ժողովի ձեռ-  
նարկումները ժողովրդական մասաների դեմ : Մտեր-  
կութեան պահպանումը գաղութներում :

4. Հակահեղափոխութեան հարձակումը: 1792 թ. սեպտեմբերի 10 հեղափոխութեանը: Ինտերվենցիայի նախապատրաստումը: Թագավորի վախուստը և վերագարձը: Թագավորին պաշտպանելը խոշոր բուրժուազիայի կողմից: Ժողովրդական մասսաներին զնդակահարելը Մարսյան դաշտում:

Քաղաքական կուսակցությունները և ակումբները: Որենագիր ժողովը: Որենքներ՝ վտարանդիների և չլիբրված քահանաների դեմ:

Տնտեսական ճգնաժամը և հեղափոխական շարժման աճումը: Ինտերվենցիայի նախապատրաստման ուժեղացումը: Ֆարական Ռուսաստանի դերն այդ նախապատրաստման մեջ:

Ռուսաստանի առաջավոր մարդկանց (Ռադիչչևի) վերաբերմունքը դեպի Ֆրանսիական հեղափոխությունը: Ֆրանսիայի կողմից Ավստրիային պատերազմ հայտարարելը: Պարտությունը ռազմաճակատներում: «Հայրենիքը վտանգի մեջ է» հայտարարելը: Ազդային-հեղափոխական վերելքը յերկրում: Հերցոգ Բրաունշվեյգի մանիֆեստը: Ինտերվենտների հարձակումը Փարիզի վրա: Ռոբեսպիերը, Մարատը: 1792 թ. սեպտեմբերի 10-ի հեղափոխությունը: Միապետության ստապումը Ֆրանսիայում:

5. Իշխանութեան գրավումը Ժիրոնդիստների կողմից: Յակոբինների պայքարը նրանց դեմ: 1793 թ. մայիսի 31-ի-հունիսի 2-ի հեղափոխությունը: Փարիզի կոմունան - հեղափոխական հաղթանակների կազմակերպիչ: Հեղափոխական կամավորական ջոկատները: Սեպտեմբերյան որերը: Հաղթությունը Վալմայի մոտ վորպես չրջադարձային մոմենտ հեղափոխական պայ-

քարի ընթացքի մեջ: Կոնվենտը: Ֆրանսիայում հանրապետություն հայտարարելը: «Յակոբինների պայքարը Ժիրոնդիստների դեմ: Թագավորին դատելը և մահապատժի յենթարկելը: Տնտեսական ճգնաժամը: Կատաղիները (Ռու): Պայքար մաքսիմուսի համար: Կոնվենտի կողմից ազատագրական պատերազմ հայտարարելը:

Անգլիայի, Հոլլանդիայի և Իսպանիայի պատերազմի մեջ մտնելը՝ Ֆրանսիայի դեմ: Հակահեղափոխական խռովությունը Վանդեյայում: Դրուիթյան վաթարացումը ռազմաճակատներում: Ժիրոնդիստների հակահեղափոխական հարձակումը: 1793 թ. մայիսի 31-ի - հունիսի 2-ի հեղափոխությունը: Յակոբինյան դիկտատուրայի հաստատումը:

6. Յակոբինյան դիկտատուրան: Տերմիդորի 9-ի հակահեղափոխական հեղաշրջումը: 1793—1794 թ. թ. հակահեղափոխական ապստամբությունները: Անգլիական ինտերվենցիան: Անգլիայի և Ֆեոդալական կոալիցիայի լրտեսներն ու դիվերսանտները Ֆրանսիայում: Ֆարական Ռուսաստանի դերը կոալիցիայում: Մարատի սպանությունը: 1793 թ. յակոբինյան սահմանադրությունը: Նրա բուրժուա-դեմոկրատական բնույթը: 1793 թ. սահմանադրության արմատական տարբերությունը Խորհուրդների յերկրի սոցիալիստական Մահմանադրությունից: Հեղափոխական կառավարության կազմակերպումը: Յակոբինական ակումբը: Ժողովրդական ընտրությունները: Որենք՝ կասկածելիների դեմ: Հեղափոխական տեռորը: Ֆեոդալական պարհաների վոչնչացումը յակոբինների կողմից: Ընդհանուր

մաքսիմուսը: Փարիզի կոմունայի պայքարը կրոնի դեմ:

Բանակի նոր կազմակերպումը և հեղափոխական տակտիկան: Ռազմական նոր տեխնիկան: Դեկրետ մասսայական զորահավաքի մասին: Հաղթանակները ստղծածակառններում: Լենինը հեղափոխական բանակի հաղթանակների պատճառների մասին: 1793—1794 թ. թ. ձմռան պարենային դժվարությունները և յակոբիններին տնտեսական միջոցառումները: Կատաղիների ջախջախումը: Պայքար յակոբինների միջև: Երեքտականներն ու նրանց պահանջները: Դանտոնականները վորպես նոր բուրժուազիայի շահերի արտահայտիչներ: Երեքտականներին և դանտոնականներին մահապատժի ցենթարկելը: Հաղթությունը Ֆլերյուսի մոտ: Ռոբեսպյերի և նրա կողմնակիցների դեմ կազմակերպված դավադրությունը: Տերմիդորի 9-ի հեղաշրջումը վորպես բուրժուական հակահեղափոխության հաղթանակ: Յակոբինական դիկտատուրայի խորտակման պատճառները:

Յակոբինական դիկտատուրայի դասակարգային սահմանափակությունը:

7. Ֆրանսիական բուրժուազիայի նշանակութունը XVIII դ. հեղափոխության մեջ: Բուրժուական հեղափոխության և պրոլետարական հեղափոխության արմատական տարբերությունը: Ֆրանսիական բուրժուական հեղափոխության նշանակությունը:

Մասսաների դերը հեղափոխության մեջ: Ի՞նչ տվեց XVIII դ. հեղափոխությունը ժողովրդական մասսաներին: XVIII դ. Ֆրանսիական բուրժուական հեղափոխության և Ռուսաստանի պրոլետարական Սոցիա-

լիստական Մեծ հեղափոխության արմատական տարբերությունները: Ընկեր Ստալինի ցույց տված հինգ հիմնական տարբերությունները: Ընկեր Ստալինը դասակարգային հասարակության պետությունների ֆունկցիաների և սոցիալիստական պետության ֆունկցիաների մասին (Ի. Ստալին, հարվետու գեկուցում կուսակցության XVIII համագումարում ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի աշխատանքի մասին): Ֆեոդալական շահագործման փոխաբերումը Ֆրանսիայում ավելի պրոզբեսիվ կապիտալիստական շահագործումով (մասսաների նյութական և իրավական դրություն վորոշ, թեպետ և վոր արմատական բարեկալումը): Ժողովրդական մասսաների դրության բարեկալման հնարավորությունը միայն սոցիալիզմի պայմաններում: Բուրժուական հեղափոխության դասակարգային սահմանափակությունը:

Իմպերիալիստական դործակալների, հայրենիքի դավաճանների- տրոցկիստների հակահեղափոխական դիրքավորումը սոցիալիստական հեղափոխության պարտություն մասին:

Ֆրանսիայի XVIII դ. վերջի բուրժուական հեղափոխության ու ԽՍՀՄ-ում պրոլետարական հեղափոխության դարգացման ուղիները նույնացնելու փորձերի միջոցով՝ պատմությունը տրոցկիստների կողմից կեղծելը: Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում: Տրոցկիստական- աջ ֆաշիստական լրտեսների ջախջախումը և վնասարարների հետագա արմատախիչ անեյն ու վորջնացումը:

III քեմա— ՖԲԱՆՍԻԱՆ 1794 Թ. ՄԻՆՉԵՎ 1815 Թ.  
(6 ժամ):

1. Տերմիդորական հակահեղափոխական կոնվենտը: Դիրեկտորիան: Բրյումերի 18-ի հեղաշրջումը: Հակահեղափոխական խոշոր բուրժուազիայի դեիկոտատուրան: Մասսայական հեղափոխական կազմակերպությունների ցրումը: Հակահեղափոխական տեոորը: Մաքսիմոմի վերացումը: Փարիզի չքավորութայն ապստամբությունը 1795 թ. դարնանը: 1795 թ. սահմանադրությունը: Ռոյալիստների խռովությունը (IV տարվա վանդեմյերի 13-ին-1795 թ. նոյեմբերի 5-ին): Կոնվենտի արձակումը: Դիրեկտորիայի կառավարությունը: Բաբյոֆը և հավասարների դավադրությունը: Բաբոլիզմի նշանակությունը:

Բազելի հաշտությունը: Գեներալ Բոնապարտը: Բոնապարտի Իտալական արշավանքը: Բոնապարտի քաղաքականությունը նվաճված յերկրներում: Կոմպոֆորմիսի հաշտությունը: Դեպի Իրլանդիա կազմակերպված արշավախմբի անհաջողությունը: Արշավանքը դեպի Յեզիպոսս և Սիրիա: Ռուսաստանի և Ավլստորիայի պատերազմի մեջ մտնելը, Սուվորովի հաջողություններն Իտալիայում և նրա Ալպերով անցնելը: Բոնապարտին պաշտպանելը խոշոր բուրժուազիայի կողմից: Բրյումերի 18-ի հակահեղափոխական հեղաշրջումը: VIII տարվա (1799 թ.) սահմանադրությունը: Առաջին կոնսուլի դեկտատուրայի հաստատումը:

2. Կոնսուլութունը և կայսրութունը Ֆրանսիայում: Բուրբոնների ռեստավրացիան: Կոնսուլության պատերազմները: Նապոլեոնական պատերազմների

դավթողական բնույթը: Լյունեվիլի հաշտությունը: Ամյենի հաշտությունը:

Նապոլեոնի կառավարությունը վորպես «բուրժուական մի կառավարություն, վորը խեղդեց Ֆրանսիական հեղափոխությունը և պահպանեց հեղափոխության միայն այն արդյունքները, վորոնք ձեռնտու ելին խոշոր բուրժուազիային» (Ի. Ստալին. զեկուցում Համկ(բ)Կ ԿԿ-ի 1938 թ. մարտի 3-5-ի սլենումում): Բոնապարտիզմը: Կոնկորդատ: Կայսրություն հայտարարելը:

Նապոլեոնի տնտեսական քաղաքականությունը: Կաքաղացիական որենսգիրքը վորպես բուրժուական հասարակության որենքների ժողովածու: Նապոլեոնի բանվորական քաղաքականությունը: Նապոլեոն I քաղաքականությունը գլուղացիների նկատմամբ: Պատերազմի վերսկսումը Անգլիայի դեմ: Կոալիցիայի լրտեսները Ֆրանսիայում, լրտեսության կազմակերպումը Նապոլեոն I կողմից կոալիցիայի յերկրներում: Ճակատամարտը Տրաֆալգարի մոտ: Ավստրիայի և Ռուսաստանի պատերազմը Ֆրանսիայի դեմ: Ճակատամարտն Աուստերլիցի մոտ: Պրեսբուրգյան հաշտությունը Ավստրիայի հետ:

Հուլիոսյան միությունը: Պրուսիայի պատերազմի մեջ մտնելը: Ճակատամարտն Յենայի և Աուերշտադտի մոտ: Պրուսիայի ջախջախումը: Նապոլեոն I հաղթանակների պատճառները: Հրովարտակ ցամաքային լյոկազայի մասին: Ճակատամարտերը Եյլաուի և Ֆրիդլանդի մոտ: Տիլզիակի հաշտությունը:

Ավստրիայի ջախջախումը Վաղրամի մոտ: Կայսրությունը 1811 թվականին: Նապոլեոնյանների սիս-

տեմը: Նապոլեոնական կայսրութեան ճգնաժամը: Յամաքային բլրկադայի անհաջողութիւնը: 1810—1811 թ. թ. արդյունաբերական ճգնաժամը: Գյուղացիների, բանվորների ու արդյունաբերական բուրժուազիայի դժգոհութիւնը Նապոլեոնի կառավարութիւնից Ֆրանսիայում: Նապոլեոնական բանակի թուլացումը:

Աղգային— ազատագրական շարժումն Իսպանիայում և նրա բուրժուական հեղափոխութեան վերածումը: 1812 թ. Իսպանական սահմանադրութիւնը: 1812 թ. պատերազմի պատճառները: Նապոլեոնի արշավանքը դեպի Ռուսաստան: Նապոլեոնական դորքերի նահանջը Ռուսաստանից: 1812 թ. պատերազմը Ռուսաստանում, վորպես ժողովրդական պատերազմ ընդդէմ սպարերկրյա արշավանքի: Նապոլեոնի պարտութեան պատճառները: Նապոլեոնի վրա ունեւ ժողովրդի տարած հաղթանակի ազդեցութիւնն արգային— ազատագրական շարժման վերելքի վրա Յեվրոպայում: «Ժողովուրդների ճակատամարտը» Լեյպցիգի տակ:

Գաղնակիցների մուտքը Փարիզ, Նապոլեոնի հրաժարումը, նրա հեռացումն Ելրա կղզին: Բուրբոնների Ռեստավրացիան: Նապոլեոնի վերադարձը: Հարյուր որյա իշխանութիւնը: Վատերլոոն: Նապոլեոնին ս. Հեղինէյի կղզին աքսորելը: Բուրբոնների յերկրորդ վերադարձը Ֆրանսիա:

IV քեմա— Անգլիան 1789—1815 թ. թ.

(1 ժամ):

Անգլիան վորպես բոլոր հակաֆրանսիական կոալիցիաների գլխավոր ներշնչող: Տարբեր դատակարգների վերաբերմունքը Անգլիայում դեպի ֆրանսիական հեղափոխութիւնը:

Թղթակցային ընկերութիւնները: Պիտտի կառավարութեան սլայքարն Անգլիայի հեղափոխական շարժման դէմ:

Ապստամբութիւնն անգլիական նախատորմում: Ապստամբութիւնն Իրլանդիայում: Իրլանդիայի և Անգլիայի ունիան (միութիւնը): Լուգդիտները: Մասսայական դեմոկրատական շարժումները հեղափոխութեան վերածելու պայմանների բացակայութիւնն Անգլիայում XVIII դ. վերջում և XIX դ. սկզբում:

V քեմա— «ՍՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵՅԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ» ԱՆԿՈՒՄԸ: ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ ՊՐՈՒՍԻԱՅՈՒՄ (1 ժամ):

Ճեղքալական կարգերի վոչնչացումը Ֆրանսիայի կողմից գրավված Հռենոսյան մարզում: Նապոլեոնի կողմից Գերմանիայի մանր պետութիւնների վոչնչացումը, «Սրբազան Հռոմեական կայսրութեան» անկումը, Նապոլեոնի կողմից Հռենոսյան Միութեան կազմակերպումը: Ավստրիական կայսրութեան կազմափոխումը:

Պրուսիան Տիլզիտի հաշտութիւնից հետո:

Շտեյնի և Հարդենբերգի ձեռնարկումները. գյուղացիների անձնական կախվածութեան վերացման սկիզբը, սահմանադրութեան նախագիծը, որենքները Ֆեդալական պարհակների փրկանքի մասին: Շարն— գորտի ազգական ռեֆորմները: XIX դ. սկզբի պրուսական ռեֆորմների ընթացքը:

## II ԲԱԺԻՆ

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՑ ՄԻՆՉԵՎ 1848 Թ.  
ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ (ՆԵՐԱՌՅԱԼ)

VI քեմա— ՎԻՆՆՆԱՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ: ՍՐԲԱԶՍԿ  
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ:

Հեղափոխական, նույն քվում և ազգային-ազա-  
տագրական շարժումները Յեվրոպայում և Ամերիկա-  
յում 20 քվականներին (2 ժամ): Վիեննայի համաժո-  
ղովը և նրա վորոշումները: Յեվրոպայի քարտեզի վե-  
րածնումը: Ըստ համաժողովի «Յեղրատիակիչ արձա-  
նագրության»: «Սրբազան Միության» կազմավորումը:  
Ռուսական ցարիզմը վորպես «միջազգային ժանդարմ»:  
Մետտերնիխը— Սրբազան Միության ղեկավար:

1820—1823 թ. թ. հեղափոխությունն Իսպանիա-  
յում: 1820—1821 թ. թ. հեղափոխությունը Նեապո-  
լում և Պլեմոնտում: Իսպանական հեղափոխության  
ազդեցությունը Ռուսաստանի հեղափոխական շարժման  
վրա (դեկաբրիստները):

Հույն ժողովրդի պայքարն ազգային անկախու-  
թյան համար: «Սրբազան Միության» պայքարը հե-  
ղափոխական շարժման դեմ:

VII քեմա— ՌԵՍՏԱՎԱՐԱՅԻԱՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ  
ՅԵՎ ՀՈՒԼԻՍՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ (1 ժամ):

Լյուդովիկոս XVIII: Ապիտակ տեւորը: Ազգային  
զուլքերի հարցը: Սահմանադրական խարտիան: «Ան-  
զուղական պարտաը», նրա ցրումը: Կարլոս X: Մեկ

միլիարդ ֆրանկի հատկացումը վտարանդներին: Լի-  
բերալ բուրժուազիայի ուղղվեցիան:

Կարլոս X որդոնանները: Հուլիսյան հեղափո-  
խությունը:

Լուի-Ֆիլիպ Ռույանացին— բանկիրների թագա-  
վոր:

Հուլիսյան հեղափոխության ազդեցությունը Յեվ-  
րոպայի վրա:

VIII քեմա—ՖՐԱՆՍԻԱՎԱՆ ՈՒՏՈՊԻՍՏԱՎԱՆ ՍՈ-  
ՅԻԱԼԻՉՄԸ (1 ժամ):

Սոչոր մեքենայական արդյունաբերության դար-  
ագումը և բանվորների թշվառ դրությունը: Սեն-  
Սիմոնը, Ֆուրյեն: Ուտոպիստական սոցիալիզմի նշա-  
նակությունը:

Ուտոպիստական սոցիալիստների հետևորդները  
Ռուսաստանում (պետրաշեվցիները):

IX քեմա— ՀՈՒԼԻՍՅԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ (1 ժամ):

Հուլիսյան միապետության սահմանադրությունը:

Լուի-Ֆիլիպի արտաքին քաղաքականությունը:  
Ֆրանսիայի տնտեսական դարգացումը: Արդյունաբե-  
րական բուրժուազիայի դժգոհության աճումը: Բան-  
վորների և դյուղացիների ծանր դրությունը: 1831 թ.  
Լիոնի ապստամբությունը և նրա նշանակությունը:  
1834 թ. ապրիլի 9—13-ի ապստամբությունը Լիոնում:

Սոցիալիստական ընկերությունները: Ուլյուստ  
Բլանկին, Լուի Բլանը:

Ռեալիզմը գրականության մեջ: Բալզակը:

X ԲԵՄԱ— ԱՆԳԼԻԱՆ 1815—1848 Թ. Թ. (3 ժամ) :

1. Անգլիան վիեննայի համաժողովից հետո : 1832 թ. պառլամենտական ռեֆորմը : 1816—1819 թ. թ. տնտեսական ճգնաժամը : «Պիտերբուրգ» :

Անգլիայի տնտեսական զարգացումը XIX դ. առաջին կեսին : Անգլիական արհեստավորների ու տնայնագործների կործանումը : Անգլիական բանվորների ծանր դրուժթյունը :

Ուսենը և Նրա ուսմունքը :

Ընկեր Ստալինը կապիտալիստական ինդուստրացման և սոցիալիստական ինդուստրացման սկզբունքային հակադրություն մասին :

Անգլիայի քաղաքական կարգերը 1832 թ. ռեֆորմից առաջ :

1832 թ. բնորական ռեֆորմը և Նրա նշանակությունը :

Որենք աշխատանոցների մասին : Բանվորների դժգոհության աճումը :

2. Չարտիզմի սկիզբը : Առաջիմ պետիցիան : Լոնդոնի բանվորական ասոցիացիայի ծագումը (Լոլետտը) և ժողովրդական խարտիայի («չարտեր») մշակումը 1836 թ. : Ֆիդիկական ուժի և բարոյական ուժի հոսանքները (Լոլետտը և Ո'կոննորը) : Չարտիստական շարժման հեղափոխական սոցիալիստական թևը (Հարնի) :

Չարտիստների առաջին պետիցիան : Մասսայական հեղափոխական շարժումը : Պետիցիայի մերժումը :

«Բարոյական ուժի» կողմնակիցները հեռանալը

չարժումից : Չարտիստական կուսակցություն կազմակերպումը (1840 թ.) :

3. Չարտիզմի 2-րդ և 3-րդ շրջանները : 1842 թ. տնտեսական ճգնաժամը և չարտիստական շարժման նոր վերելքը :

Յերկրորդ պետիցիան : Նրա մերժումը պառլամենտի կողմից :

Ընդհանուր դործադուլ կազմակերպելու փորձը :

Տասժամյա բանվորական սրը : «Յեղաջրական դեմոկրատները» և Մարքսի ու Ենգելսի ազդեցությունը նրանց վրա : 1847 թ. տնտեսական ճգնաժամը :

Յրանախական հեղափոխությունը վորպես չարտիզմի նոր վերելքի մղիչ : 1848 թ. ապրիլի 10-ի ցույցը և Նրա անհաջողությունը :

Մարքսիզմ-Էնկնիզմի կլասիկները չարտիզմի մասին :

Չարտիստական շարժման պարտություն պատճառները :

XI ԲԵՄԱ. ԳԵՐՄԱՆԻԱՆ 1815—1848 Թ. Թ.

(1 ժամ) :

Գերմանական միություն պետությունների քաղաքական կարգերը : Գերմանական պետությունների մասնատվածությունը— կապիտալիզմի զարգացման արգելիչ : Կապիտալիզմի զարգացումը դյուղատնտեսություն մեջ : Գերմանական պետությունների արդյունաբերություն թույլ զարգացումը : 1830 թ. Փրանսիական հեղափոխության ազդեցությունը Գերմանիայի հեղափոխական շարժման վերելքի վրա :

1834 թ. «Մարքսային դաշինքը» : Բանվորների

դրութիւնը: Սիլեզյան մանագործները ապստամբու-  
թիւնը (1844): «Յերիտասարդ Գերմանիա» ընկերու-  
թիւնը: Վայալինդի սոցիալիզմը: Մարքսը Վայտին-  
դի մասին:

## XII քեմա— Կ. ՄԱՐՔՍԸ ՅԵՎ Ֆ. ԵՆԳԵԼՍԸ

(3 ժամ):

Կարլ Մարքսը: Մարքսը և ձախ հեղեղականները:  
Մարքսը— հեղափոխական— դեմոկրատ («հռենոսյան  
լրագրի» խմբագրումը): Մարքսը փարիզում:  
Մարքսը— սոցիալիստ (1843 թվից):

Մարքսի բարեկամութիւնը Ենգելսի հետ:

Ֆրիդրիխ Ենգելսը: Ենգելսի «Բանվոր դասակար-  
գի դրութիւնն Անգլիայում» աշխատութեան նշանա-  
կութիւնը:

Մարքսը և Ենգելսը— դիտական կոմունիզմի հիմ-  
նադիրներ, հեղափոխական մարտիկներ, միջազգային  
հեղափոխական շարժման առաջնորդներ: Մարքսիզմի  
յերեք աղբյուրները և յերեք բաղկացուցիչ մասերը:

Պայքար կոմունիստական կուսակցութիւն ստեղ-  
ծելու համար: «Կոմունիստների միութեան» ստեղ-  
ծումը (1847 թ.):

Կոմունիստական Մանիֆեստը, նրա պատմական  
նշանակութիւնը: Սոցիալիզմի ուսուցիչից դիտու-  
թիւնն դարձնելը: Պրոլետարիատի դիկտատուրան—  
գլխավորն է մարքսիզմում: Կոմունիստական մանի-  
ֆեստի I գլխի բովանդակութիւնը: «Պրոլետարիատի  
դիկտատուրայի՝ վորպես պրոլետարիատի քաղաքական  
տիրապետութեան և՛ վորպես կապիտալի իշխանու-  
թիւնը բռնութեան միջոցով տապալելու մեթոդի՝  
հիմնական դադափարը տվել են Մարքսը և Ենգելսը»

(Ստալին— Լենինիզմի հարցեր, էջ 257): Մարքսը և  
Ենգելսը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժա-  
մանակաշրջանի հասարակութեան քաղաքական կազմա-  
կերպութեան ձևի մասին: Մարքսը և Ենգելսը սոցիա-  
լիստական հեղափոխութեան մասին:

Սոցիալիստական, հեղափոխութեան և կապիտա-  
լիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի հա-  
սարակութեան քաղաքական կազմակերպութեան մասին  
ուսմունքը նոր, ավելի բարձր աստիճանի վրա բարձ-  
րացնելը Լենինի և Ստալինի կողմից:

Կոմունիստական կուսակցութեան Մանիֆեստի II  
գլխի բովանդակութիւնը. «Մարքսն ու Ենգելսը տը-  
վել են հիմնական գերվազձեռ կուսակցութեան՝ վոր-  
պես պրոլետարիատի առաջավոր ջոկատի՝ մասին...»:

(Ստալին, Լենինիզմի հարցեր, էջ 260):

Մանիֆեստի IV գլխի բովանդակութիւնը: Մա-  
նիֆեստի յեզրավակիչ մասը: Պրոլետարական սոցիա-  
լիստական հեղափոխութեան հաղթանակը ԽՍՀՄ-ում  
վորպես մարքսիզմ—լենինիզմի հաղթանակն տրիումֆը:

## XIII քեմա—1848 Թ. ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԸ- ՐԱՆՍԻԱՅՈՒՄ (3 ժամ):

1. Փետրվարյան հեղափոխութիւնը: Հունիսյան  
ապստամբութիւնը փարիզում: 1847 թ. տնտեսական  
ճգնաժամը: Հուլիսյան միապետութեան քաղաքական  
ճգնաժամը:

Բանկետային կամպանիան: Փետրվարյան հեղա-  
փոխութիւնը: Ժամանակավոր կառավարութեան կազ-  
մակերպումը: Մասնաճեղի ճնշումը կառավարութեան

իբրա: Հանրապետութիւնն հայտարարելը, աշխատանքի իրավունք հայտարարելը և «Լուսկենսութեան հանձնաժողովը»: Աշխատանքի իրավունքի իրական ազատութեամբ ԽՍՀՄ-ում: Լուսի Բլանի դավաճանական տակտիկան: Լենինը լուսի-բլանականութեան մասին: Շարժական դիվարդիալի ստեղծումը:

Ազգային արհեստանոցները: Բանվորական մասսաներին գյուղացիներից կտրելու ժամանակավոր կառավարութեան քաղաքականութիւնը: Սահմանադիր ժողովը:

Մայիսի 15-ի ցույցը: Ազգային արհեստանոցների փակելը: Հունիսյան ապստամբութիւնը: Ապստամբութեան ճնշումը գեներալ Կալենյակի կողմից: Ապստամբութեան պարտութեան պատճառները: Հունիսյան ապստամբութեան նշանակութիւնը: Մարքսը հունիսյան որերի մասին:

2. Հանրապետութեան ղեկի կայսրութիւնը: 1848 թ. սահմանադրութիւնը: Հանրապետութեան նախագահի ընտրութիւնը: Լուսի Բոնապարտի ընտրվելը: Գյուղացիութիւնը և Լուսի Բոնապարտը:

Որենսդիր ժողովը: 1849 թ. հունիսի 13-ի յերույթը:

1851 թ. գեկտեմբերի 2-ի պետական հեղաշրջումը:

Հանրապետական ապստամբութիւնները: Կայսրութիւնն հայտարարելը (1852 թ. գեկտեմբերի 2-ին):

Մարքսը, Ենգելսը, Լենինը բոնապարտիզմի դասակարգային ելուցիւնն մասին:

XIV ք-եմա. — 1848 թ. ՀԵՂԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ (4 ժամ):

1. Հեղափոխութեան սկիզբը Գերմանիայում: Հեղափոխական շարժման կենտրոնի տեղափոխումը Գերմանիա: Գերմանական միութեան պետութիւնների առջ կանգնած հիմնական հարցը վերամիավորման հարցն էր:

Գերմանիայի տնտեսական դրութիւնը հեղափոխութեան նախորդակին: Պրոլետարիատը վորպես ժխակ հեղափոխական դասակարգը:

Ճիւղերի-Վիլհելմ IV. բուրժուազիայի ռեֆորմների հուլիսը: 1847 թ. տնտեսական ճգնաժամը: Միացյալ լանդտագը և նրա ցրումը: Ճրանտիայի փետրը-վարյան հեղափոխութեան աղբեցութիւնը Գերմանիայի վրա:

1848 թ. փետրվարի-մարտի հեղափոխական շարժումը Հարավային Գերմանիայում: Գյուղացիական ապստամբութիւնները 1848 թ. մարտին: Հեղափոխութիւնը Վիեննայում (մարտի 13—15-ին):

Հեղափոխութիւնը Բեռլինում (մարտի 18—19-ին):

Լիբերալ բուրժուազիայի իշխանութեան դուրսնանքները: Լիբերալ բուրժուազիայի տակտիկան: Պրոլետարիան ազգային ժողովը: Պառլամենտի դուրսումը Ճրանկֆուրտում, վորպես Գերմանիայի վերամիավորման փորձ: Նրա դնահատականն Ենգելսի կողմից:

2. Մարքսի և Ենգելսի տակտիկան 1848 թ. հեղափոխութեան մեջ: Մարքսի և Ենգելսի դալը Հեղ-

նոսյան պրովինցիան (1848 թ. ապրիլին) : «Նոր Հոն-  
նոսյան լրագրի» լույս ընծայումը և նրա նշանակու-  
թյունը : Մարքսի և Ենգելսի վերաբերմունքը դեպի  
դյուղագրությունը : Մարքսի պայքարն ինքնուրույն  
բանվորական կուսակցություն ստեղծելու համար :  
Պայքարը «ներքևից» հեղափոխական միջոցով Գեր-  
մանիան վերամիավորելու համար, դեմոկրատական  
հանրապետություն հաստատելու համար, ընդդեմ  
Ֆեոդալական գինաստիաների, ընդդեմ ուսական  
ցարիզմի վորպես յեվրոպական ռեակցիայի գլխավոր  
հենարանի : Մարքսի և Ենգելսի կողմից լիբերալ բուր-  
ժուազիայի դավաճանությունը դիմակազերծ անելը :

Պայքարը յերկու ճակատում բանվորական շարժ-  
ման մեջ :

Մարքսը — Քյոլնի բանվորական միությունն նա-  
խադահ :

3. Հակահեղափոխության հարձակումը : Հունիս-  
յան ապստամբության ջախջախումը Փարիզում և հա-  
կահեղափոխության հարձակումը Գերմանիայում :

Հոկտեմբերյան ապստամբությունը Վիեննայում :

Ազգային թնամություն հրահրելն Ավստրիական  
կայսրության ռեակցիոն կառավարության կողմից :  
Ազգային-աղատադրական շարժումը Հաբսբուրգյան  
միապետության մեջ :

Ավստրիական սլավոնների շարժման ռեակցիոն  
բնույթը :

Մարքսը սլավոնական շարժման հեղափոխական  
հնարավորությունների մասին : Ընկեր Ստալինը  
1848—1849 թ. թ. սլավոնների մասին : Պրուսական  
ազգային ժողովի ցրումը :

4. Հեղափոխության վերջին ետապը : կայսրու-  
թյան սահմանադրության մշակումը Յրանիֆուրտի  
պառլամենտի կողմից : Գերմանական պետությունների  
թնամական վերաբերմունքը դեպի այդ սահմանա-  
դրությունը : Ապստամբություն կայսրության սահ-  
մանադրության համար : Մարքսի և Ենգելսի ակտիվ  
մանակցությունը մայիսյան ապստամբությանը :

«Նոր Հոննոսյան լրագրի» փակումը պրուսական  
կառավարության կողմից : Ապստամբության ջախջա-  
խումը գերմանական հակահեղափոխության միացյալ  
ուժերի կողմից :

Յրանիֆուրտյան ժողովի ցրումը :

Հունգարիայի անկախության հայտարարումը :  
Հունգարական հեղափոխության բնույթը և միջազ-  
գային նշանակությունը :

Ռուսական ցարիզմը վորպես «Յեվրոպայի ժան-  
դարմ» :

Յարական ինտերվենցիան Հունգարիայում :

Դաժան դատաստան հեղափոխական Հունգարիայի  
նկատմամբ : Ռուս հեղափոխական դեմոկրատների  
վերաբերմունքը դեպի հունգարական հեղափոխու-  
թյունը :

5. Հեղափոխության պարտության պատճառները  
Գերմանիայում : Մարքսի ուսմունքն անրկոհատ հե-  
ղափոխության մասին : Հեղափոխության պարտու-  
թյան պատճառները Գերմանիայում : Լիբերալ  
բուրժուազիայի դավաճանությունը վորպես հե-  
ղափոխության պարտության գլխավոր պատճառը :  
1848—1849 թ. թ. Գերմանական բուրժուական հեղա-  
փոխության անավարտ բնույթը : Մարքսի պերմանենտ

հեղափոխութեան թեորիան և Կենտրոնական Կոմիտեյի դիմումը կոմունիստների Միութեանը 1850 թ.:

Մարքսի թեորիայի զարգացումը Լենինի և Ստալինի կողմից իմպերիալիզմի նոր պայմաններում և լենինյան ուսմունքը՝ վերածման մասին վորպես «պերմանենտ հեղափոխութեան մարքսյան թեորայի մարմնացման ձևերից մեկը» (Ստալին, Լենինիզմի հարցեր, էջ 163): Ռուսաստանի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխութեան մեջ զործնականորեն այդ ուսմունքի իրականացումը Լենին-Ստալինի կուսակցութեան կողմից:

XV քեմա. — 1848 թ. Հեղ. Ա. Փոստոլովի ԻՏԱԼԻԱՅՈՒՄ (2 ժամ):

Իտալիայի քաղաքական մասնատված դրությունը: Ավստրիական ճնշումը: Մարքսի թաղավորությունը վորպես Իտալիայի ավելի ինքնուրույն մասը: «Յեկոտասարգ Իտալիան»: Մալլենին և նրա գաղափարական տակտիկան: Ապստամբությունը Միցիլիստում և հեղափոխութեան սկիզբը թերակղզում: Միլանից ավստրացիներին դուրս անելը և պատերազմը Ավստրիայի դեմ: Զուգեպպե Գարիբալդին և նրա մասնակցությունը պատերազմին: Կարլ Ալբերտի դավաճանությունը և Ավստրիայի հետ զինադադար կնքելը: Հանրապետությունները Հռոմում և Վենետիկում: Պատերազմական գործողությունների վերըսկսումն Ավստրիայի դեմ 1849 թ. դարնանը և Պյեմոնտի ջախջախումը: Ֆրանսիական ինտերվենցիան Հռոմում: Գարիբալդիի հերոսական պայքարը: Հռոմի և Վենետիկի անկումը: 1848—1849 թ. թ. բուրժուական հեղափոխութեան պարտությունն Իտալիայում:

### III ԲԱԺԻՆ

XIX Դ. 50—60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

XVI քեմա. — «Յեվրոպայի Ռեպուբլիկան: ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԸ» (2 ժամ):

1. 50-ական քվակաճների յեվրոպական ռեակցիան:

Ռեակցիայի հաղթանակը յեվրոպական յերկրներում:

Կոմունիստների Միութեանը 1848 թ. հեղափոխութեանից հետո: Քյոլնի դատավարութեանը: Կոմունիստների Միութեան գործունեութեան զազարեցումը:

2. Արևելյան հարցը: Ղրիմի պատերազմը: Պայքար թյուրքիայում զերակչութեան ձեռք բերելու համար: Ռուսաստանի մեկուսացումը: Ղրիմի պատերազմը վորպես բուրժուական և ճորտատիրական սխտեմների բաղխում: Ռուսաստանի պարտութեանը: Փարիզի հաշտութեանը:

Յեվրոպական գործերի վրա յարական Ռուսաստանի ազդեցութեան թուլացումը:

Ռումինիայի կազմավորումը: Թյուրքիայից անկախ Սերբիայի կազմավորումը:

Մարքսը, Ենգելը, Լենինը, Ստալինը Ղրիմի պատերազմի նշանակութեան մասին:

XVII քեմա. — ԱՆԳԼԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ XIX Դ. 50—60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (4 ժամ):

1. Անգլիան 50—60-ական ք. ք.: Նրա համաշ-

խարհային գերակշռութիւնը: Գաղութային քաղաքա-  
կանութիւնը: Առևտրա-արդյունաբերական վերելքի  
սկիզբը 50-ական թ. թ.:

Անդլիան— «աշխարհի արհեստանոց»: Ֆրիտրեդե-  
րականութեան հաղթանակը: Անդլիական Ֆրիտրեդե-  
րականութեան ազդեցիկ բնույթը: Մինիստրների կա-  
բինետի դերը ուժեղացումը: Տորի և Վելլի կուսակ-  
ցութիւնները:

Պարմերսոնի կարենետի ներքին և արտաքին  
քաղաքականութիւնը: Գաղութային քաղաքականու-  
թիւնը: Անդլիական դադութիւնների յերկու տիպը: Անդ-  
լիական կառավարման տարբեր մեթոդները սպիտակ և  
«գունավոր» բնակչութիւն ունեցող դադութիւններում:  
Անդլիացիների կողմից հողերի զավթումը դադութի-  
ւններում:

2. Անգլիայի քաղաքականութիւնը Հնդկաստա-  
նում և Չինաստանում: Արևելքահնդկական ընկերու-  
թեան առևտրական մենաշնորհի վոչնչացումը և անդ-  
լիական Փարբիկային ապրանքների մասսայական տա-  
րածումը Հնդկաստանում: Հյուսիսային և կենտրոնա-  
կան Հնդկաստանի պետութիւնների միացումը:

Միսյաների ապստամբութիւնը: Չինաստանի  
ստրկացումը կապիտալիստական պետութիւններին  
կողմից: Տայպինյան հեղափոխութիւնը և նրա ճնշ-  
ւումը:

3. Իրլանդիան վորպես Անգլիայի գաղութ: Իր-  
լանդական դյուղացիութեան շահագործումն անդլիա-  
կան հողատերերի կողմից: Գյուղացիների ապստամբու-  
թիւնը: Ֆենիներին շարժումը վորպես բուրժուա-ազ-  
գային շարժում: Իրլանդական ազգային- ազատագրա-

կան շարժման պաշտպանութիւնը և Ֆինիների շարժ-  
ման բացասական դժերի, ամենից առաջ նրանց տնտ-  
րիստական տակախկայի խիստ քննաշատութիւնը  
Մարքսի և Ենդելսի կողմից:

4. Բանվորական շարժումն Անգլիայում: Մարքսը  
և Ենդելսը անդլիական վտարանդութեան մեջ:

Բանվորական շարժումը: Տրեդ-յունիոնները, նը-  
շանց եկոնոմիզմը: Բանվորների վորակավոր վերնա-  
խավին կաշռելը բուրժուազիայի կողմից: Ճշմտամբ  
և բանվորական շարժման վերելքը: 1867 թ. պառլա-  
մենտական ռեֆորմը:

#### XVIII Եւմա.— ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ (3 Ժամ):

1. Միացյալ Նահանգները XIX դ. առաջին կես-  
ում: Հյուսիսային Ամերիկայի անտեսական զարգա-  
ցումը XIX դ. առաջին կեսում: Բանվորների դրու-  
թիւնը: Ներդաղթը դեպի Ամերիկա: Պլանտացիոն  
անտեսութեան աճումը և ստրկավաճառութիւնը: Ա-  
րեւմուտքի դադութացումը:

Ֆերմերութեան կազմավորումը: Ստրուկների ա-  
պստամբութիւնները: Արտիցիոնիստները: Պայքար  
արեւմտյան հողերի համար: Ջոն Բրաունի ապստամ-  
բութիւնը: Հանրապետական կուսակցութեան կազ-  
մակերպումը:

2. Քաղաքացիական պատերազմի ընթացքը Հյու-  
սիսային Ամերիկայում: Աբրահամ Լինկոլնի նախագահ  
ընտրվելը (1860) թ. և ստրկատիրական Հարավի հա-  
կահեղափոխական խռովութիւնը: Ստրկատիրութիւնը

պաշտպանելու նպատակով անգլիական բուրժուազիայի կազմակերպած խայտառակ ինտերվենցիայի կանխումն անգլիական բանվորների կողմից:

Մարքսի և Ենդելսի յեղևյթն յեվրոպական և ամերիկական մամուլում՝ ստրկատերերի դեմ հեղափոխական մեթոդներով պատերազմ վարելու համար:

Մասսայական շարժումը Հյուսիսում վորպես պատասխան Լինկոլնի կառավարութան անվճռական տակտիկային:

Հեղափոխականորեն պատերազմին անցնելը: Որենքները հոմստեդները մասին: Մարկուսի վոչնչացումը: Բանակի դուռը: Բանվորական դեղեմեջ: Բեկում օգոստոսի դործողութունները Ընթացքի մեջ: Հյուսիսի արդյունաբերական դերադանցումը: Գերմանի ռեյզը: Գերմանի հաջությունները: Հյուսիսի հաղթանակը: Լինկոլնի սպանությունը: Հյուսիսային Ամերիկայի քաղաքացիական պատերազմի արդյունքները և նշանակությունը: Քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում և հեղափոխական դեմոկրատները Ռուսաստանում:

XIX քեմա. — ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ (2 ժամ):

Ճապոնիան Տեկուզայան սեփմի որոք: Ճապոնիան XIX դ. կեսին: Ամերիկացիների և յեվրոպացիների ներխուժումը Ճապոնիա:

Պայքար ստրեքիտացիների դեմ: Հեղափոխությունը և սեյունատի վոչնչացումը: Գյուղացիությունը և քաղաքի ստորին խավերի ապստամբությունը ճնշումը: Միկագոյի կառավարման

սահմանումը: «Մեյձիի ռեֆորմները»: Ռեֆորմների բնույթը վորպես ֆեոդալական շահագործման պահպանում և հարմարեցում դարգացող կապիտալիստական հարաբերություններին: «Մեյձիի ռեֆորմները» վորպես Հեռավոր Արևելքում Ճապոնիային լիտի իմպերիալիստական դիչատիչ դարձնելու նախադրյալ:

XX քեմա. — ԻՏԱԼԻԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ (2 ժամ):

1. Միավորման շարժումը 50-ական թվականներին: Իտալիայի վերամիավորման համար սկսած շարժման նոր վերելքի սկիզբը 50-ական թվականներին:

Մադձինիի դավադրական տակտիկան Իտալիայի «ներքեկց» վերամիավորման համար մղած պայքարում:

Մարքսը և Ենդելսը ժողովրդական հեղափոխություն միջոցով Իտալիայի վերամիավորման մասին:

Կալուրը և նրա Իտալիան «վերելք» վերամիավորելու ծրարը: Նապոլեոն III համաձայնությունը կալուրի հետ:

Պատերազմն Ավստրիայի դեմ: Գարիբալդին: Ժողովրդական շարժման սկիզբն Ավստրիական տիրապետության դեմ: Նապոլեոն III դավաճանությունը, նրա կողմից պատերազմին վերջ տալը:

Մարքսը և Ենդելսը՝ Քրանո-իտալա-ավստրիական պատերազմի վերջանալուց հետո միավորման համար սկսած շարժման նոր վերելքի անխուսափելիություն մասին:

2. Ժողովրդական շարժման հաղթանակը, իտալիայի վերամիավորումը Սափոյան դինաստիայի իշխանութեան ներքո: Գյուղացիներին ապստամբությունն Իտալիայի հարավում 1860 թ.: Գարիբալդիի «Հաղաբլուզ»: Հարավային Իտալիայի միացումը Պիեմոնտին: Իտալիայի հարավում կարվածատերերի դեմ բռնկված դյուղացիական մասսայական ապստամբությունները դաժան ճնշումը սլեմոնտյան զորքերի կողմից:

Իտալական կայսրութեան կազմավորումը:

Գարիբալդին և Հոսմը: Իտալիայի վերամիավորման ավարտումը: Գարիբալդիի հաղթանակները սպառնալից սարդինյան բուրժուազիայի կողմից Իտալիայի «վերելից» վերամիավորումն ավարտելու համար:

### XXI քեմա. — ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ (2 ժամ):

1. Վերամիավորման շարժումը 50-ական քվակալներին և 60-ական քվակալներին սկզբում: Պրուսիայի պետական կարիները 1848 թ. հեղափոխությունից հետո: Արդյունաբերության զարգացումը Պրուսիայում և դերմանական մյուս պետություններում 50-ական թվականներին: 1850 թ. դյուղացիական ռեֆորմը: Կապիտալիզմի զարգացման սլուստական ուղին դյուղատնտեսության մեջ:

Սահմանադրական կոնֆլիկտը: Բիսմարկը և Պրուսիայի գլխավորութեամբ — «յերկաթով ու արյունով», պատերազմներում: դեմոկրատական շարժման դեմ պայքարի միջոցով — Գերմանիայի միավորման նրա ծրագրերը:

Սովորողների նախընթաց պատմական պատրաս-տականությունը (մասնավորապես , հին աշխարհի և

միջին դարերի պատմութեան իմանալը) թույլ է տալիս  
ԽՍՀՄ-ի պատմութեան տարբերական դասընթացի համեմ-  
մատութեամբ ավելի խորը դնել աչք հարցի լուծումը:

VIII—X դասարանները դասատուն կարող է և  
պետք է շարադրի մեր յերկրի պատմութեանն ամբողջ  
մարդկութեան պատմական պրոցեսի լայն Փոնի վրա,  
յուրյոց տալով այն կապը և փոխադրեցութեանը, վոր  
վոյսութեան ունի մեր յերկրի պատմութեան և Արև-  
մուտքի ու Արևելքի յերկրները պատմութեան միջև,  
մի խոսքով, նա ԽՍՀՄ-ի պատմութեանն այնպես  
պետք է շարադրի, վորպեսզի նա «չանջատվի համա-  
յեկրոպական պատմութեանից և առհասարակ համաշ-  
խարհային պատմութեանից» (Ի. Ստալին, Ա. Ժդա-  
նով, Ս. Կիլով, Դիտողութեաններ ԽՍՀՄ-ի պատմու-  
թեան դասադրքի կոնսպեկտի վերաբերյալ): Քննու-  
թեան առնելով համաշխարհային պատմութեան ընդհա-  
նուր որինաչափութեանները մեր յերկրի անցյալում,  
նույն ժամանակ դասընթացը պետք է ուշադրութեան  
դրավի և դեպի այն առանձնահատկութեանները, վո-  
րոնցով ԽՍՀՄ-ի պատմութեանը տարբերվում է ուրիշ  
յերկրների պատմութեանից:

Չսահմանափակվելով միայն վելիկոուսիայի  
պատմութեամբ, ԽՍՀՄ-ի պատմութեան դասընթացը  
ձանոթացնում է սովորողներին մեր յերկրի և ուրիշ  
ժողովուրդների անցյալին, յուրյոց և ապա շատ ժողո-  
ղովուրդների Խորհրդային Միութեան մեջ յեղբայրա-  
կան միավորման պատմական արմատները: «ԽՍՀՄ-ի  
պատմութեան» դասընթացում մեր յերկրի ժողովուրդ-  
ները պետք է հանդես գան վոչ թե վորպես ուսուսական  
յարկովի դադութեային քաղաքականութեան որակետ,

այլ վորպես պատմական պրոցեսի սուբյեկտներ, վո-  
րպես մարտիկներ իրենց ապագայի համար և ձևով ազ-  
դային, բովանդակութեամբ սոցիալիստական համա-  
խորհրդային կուլտուրայի ստեղծողներ, կուլտուրայի,  
վորը վառ ծաղիկներով բացվել է Ստալինյան Սահմա-  
նադրութեան արևի տակ:

ԽՍՀՄ-ի պատմութեան մարքսիստական-լենինյան  
դասընթացը հսկայական դաստիարակչական նշանա-  
կութեան ունի— նա խորհրդային յերիտասարդութեան  
մեջ խորը համոզմունք է դաստիարակում դեպի կո-  
մունիզմի վերջնական հաղթանակը և ամբացնում է  
սերը դեպի մեր մեծ հայրենիքը, վորովհետև իր հայ-  
րենիքի անցյալն իմանալն, նրա հերոսական անցյա-  
լով հպարտանալը— անհրաժեշտ պայման է նրա հա-  
մար, վորպեսզի սերը դեպի հայրենիքը դառնա դե-  
տակցական:

Պատմութեան դասատուն ԽՍՀՄ-ի պատմութեան  
դպրոցական ամբողջ դասընթացի տեղութեամբ պետք  
է պաշարի կոմունիստական դաստիարակութեան խըն-  
դիները իրացման համար:

VIII դասարանի դասընթացն ընդգրկում է ԽՍՀՄ  
ժողովուրդների պատմութեանը մինչև XVIII դարը:  
Նա բաժանվում է վեց մեծ բաժինների:

I ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ— ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ  
ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ

«ԽՍՀՄ-ի պատմութեան» դասընթացի I բաժինը  
սովորողներին համառոտակի ձանոթացնում է նախնա-  
դարյան-համայնական կարգերի ու ստրկատիրական

պետութիւնները հետ մեր միութեան տերիտորիայի վրա: Նա հասակորեն բաժանվում է յերեք մասի:

1. Այդ բաժնի առաջին մասում տեղեկութիւններ են տրվում նախադասակարգային հասարակութեան կուլտուրայի մասին այն շատ հարուստ նյութի հիման վրա, վորը դանվում է խորհրդային հնազնուութեան տրամադրութեան տակ: Այդ հարցերի վերաբերյալ սովորողներն արդեն վորոշ նախնական պատաստութիւն ստացել են: Տոհմական կարգերի քայքայման պրոցեսը նպատակահարմար է շարադրել ավելի ուշ առանձին ժողովուրդների (հատկապէս արեւելյան սլավոնների) պատմութեան կոնկրետ նյութի վրա: Սա թույլ է տալիս ուսուցչին սահմանափակվել ամենահամառոտ տեղեկութիւններով մեր յերկրի ժողովուրդների հնազույն կուլտուրայի մասին:

2. Ի բաժնի յերկրորդ մասը կազմում է հին պատմութիւնը (այսինքն մեր յերկրի պատմութիւնը մինչեւ ստրկատիրական հասարակարգի անկումը): Այդ ժամանակ արդեն մեր Միութեան տերիտորիայի վրա ծագում են ստրկատիրական տիպի մի քանի պետական կազմավորումներ (Հարավ-Արեւմտեան, Միջին Ասիայի սաղիաներում, Սև ծովի հյուսիսային ափերում): Այդ դոյացումների պատմութիւնը այնքան սերտ կապված է հին պետութիւնների և անտիկ հունա-հռոմեական հասարակութեան հետ, վոր միջնակարգ դպրոցում այն պետք է ուսումնասիրվի «Հին աշխարհի պատմութեան» դասընթացում: Դա վերաբերվում է նաև այն «բարբարոսական» հասարակութիւններին (ինչպէս, որինակ, սկյութացիները), վորոնք հանդիսանում են ինքն անտիկ հասարակութեան ծայրամասը:

«ՌՍՀՄ-ի պատմութեան» դասընթացում կարգավորվում է ավելի վաղ հաղորդած նյութը մեր Միութեան ժողովուրդների հին պատմութեան մասին (իհարկէ, այն տեղեկութիւնների լրացումով, վորոնք դեռևս չեն մտցված հին աշխարհի պատմութեան դասընթացի մեջ): Անհրաժեշտ է ընդգծել, վոր ոտարերկրացիները (պարսիկների, մակեդոնացիների, հռոմեացիների) բազմաթիվ ներխուժումների պատմութիւնը շարադրելիս հարկավոր է ուշադրութիւնն ուղղել վոչ այնքան դեպի նվաճողների ու նվաճումների պատմութիւնը, վորքան դեպի ժողովուրդների անցյալը և դեպի նրանց պայքարը նվաճողների դեմ: Ուստի վոչ թէ Ալեքսանդր Մակեդոնացին, այլ Սպարտանը պետք է զբաղեցնի կենտրոնական տեղը Միջին Ասիայում մակեդոնական նվաճումների մասին արած պատմվածքում, նույնպէս և արաբական տիրապետութեան պատմութեան մեջ Միջին Ասիայում պետք է կանգ առնել վոչ թէ արաբական խալիֆաների դեմքերի վրա, այլ Մուկաննայի: Ստրկատերերի պետական կազմավորումներից մեր յերկրի տերիտորիայի վրա մշտնադարձ պայքար է կանգ առնել Ուրարտույի պետութեան և Բոսպորական թագավորութեան վրա: Բոսպորական թագավորութեան և ընդհանրապէս Մերձսևծովյան պատմութիւնը սովորողներին ընդհուպ կմոտեցնի ստրկատիրական հասարակութեան անկմանը. նա կծանոթացնի և ստրուկների սպրտամրութեան հետ, և բարբարոսների ուղեւորացեղային միութեան պայքարի հետ՝ ստրկատիրական պետութիւնների դեմ:

3. I բաժնի յերրորդ մասը ծանոթացնում է աչա-  
կերաներին «վաղ միջնադարի» շրջանին (V—VII դ.  
դ.) : Բացի ընդհանուր պատմության դասընթացից ա-  
չակերաներին ծանոթ նյութի (հոնները և նրանց նվա-  
ճումները, արևմտյան Հռոմեյական կայսրության ան-  
կումը, Բյուզանդիան և արաբները) կրկնությունից,  
դասընթացի այդ բաժնում մտնում են յերեք հիմնա-  
կան հարցեր՝

1) ցեղերի առաջ շարժումը Արևելյան Յեվրոպա-  
յում և խաղարահյան ու բուլղարական պետությունների  
կազմավորումը,

2) Հարավ-Կովկասը և Միջին Ասիան խալիֆայի  
իշխանության տակ,

3) Սլավոնները և նրանց հարևանները մինչև VIII  
դարը :

Այս համառոտ ցուցմունքներից յերևում է, Վոջ  
«ՍՍՀՄ պատմության» դասընթացն արդեն այս բաժ-  
նում մտնում է համաշխարհային պատմության շրջա-  
նակների մեջ և հենց դրանով էլ դուրս է հանվում Ռու-  
սիայի պատմության տրադիցիոն դասընթացի սահ-  
մաններից : Դասընթացի արդեն այս մասում նշվում  
են նաև այն շորս մեծ շրջանները, վորոնց պատմու-  
թյունը բնում է կենտրոնական մասը մեր յերկրի  
հետև անցյալում (Հարավ-Կովկասը, Միջին Ասիան,  
Արևելյան Յեվրոպայի տափաստանը և նրա անտառա-  
յին շերտը) :

Վերջապես դասընթացի հենց այդ մասում հարկա-  
վոր է ցույց տալ նաև վորոչ կապերի առկայությունն  
այդ շրջանների միջև (որինակ, արաբների ազդեցու-

թյունը, վորը խաղարների և բուլղարների միջոցով  
տարածված էր ամբողջ Արևելյան Յեվրոպայի վրա) :

## II ԿԻՅԵՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կիևյան պետության պատմությունը հանդիսանում  
է դասընթացի հաջորդ կարևոր բաժինը : Այն նշանա-  
կությունը, վորն ունեցել է Կիևյան պետությունը  
վերլիտոուսական, ուկրաինական և բելոուսական ժո-  
ղովուրդների պատմության մեջ, բացատրում է այն  
մեծ տեղը, վորը հատկացված է նրան դասընթացում :  
Կիևյան պետության պատմության մեջ ուսումնասիր-  
վում է դասակարգերի կազմավորման պրոցեսը Արևել-  
յան Յեվրոպայի հիմնական տերիտորիայի վրա, ան-  
ցումը ցեղային կարգերից դեպի պետության և Ֆեո-  
դալական հարաբերությունների ծաղումը : Շատ կար-  
ևոր է ցույց տալ, վոր Կիևյան պետության կազմավո-  
րումը նախապատրաստված էր արևելյան սլավոնների  
տոհմա-ցեղային կարգերի քայքայման պրոցեսի կող-  
մից : Միայն այս դեպքում սովորողները կարող են  
ճիշտ հասկանալ վարչադական նվաճումների դերը և  
վարչադների մեջ չեն տեսնի «պետականության  
սկզբունքները» բերողների, վորին, իբրև թե, մինչև  
այն ժամանակ ծանոթ չեյին արևելյան սլավոնների ցե-  
ղերը, վորովհետև զեռ շատ ավելի վաղ սլավոններն  
ուներին իրենց ցեղային իշխանները :

Շարադրելով Կիևյան պետության պատմությունը,  
անհրաժեշտ է ընդգծել, վոր Կիևյան պետությունը մի  
քանի հարյուրամյակների ընթացքում միավորել է ար-  
ևելյան սլավոնների զանազան ցեղերին— վերլիտուս-  
ների, ուկրաինացիների և բելոուսանների նախնիքներին :

Այդ նույն դարերում այդ ժողովուրդների կուլտուրաներն ընդհանուր հիմունքների վրա յեն դրվում: Ուստի Կիւսյան դարաշրջանի կուլտուրան (բիւլինաները, «Ա.ս.բ. Իւրրի պնդի մասին», տարեգրերը, ճարտարապետութիւնը) հարկաւոր է բնութագրել հնարավոր չափով լրիվ կերպով:

III. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՅԵՎ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՖԵՆՈՂԱԼԱԿԱՆ ՄԱՍՆԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ֆեոդալական հարաբերութիւնների զարգացումը XII դարում հասցնում է «ոյուրիկովիչների իմպերիայի» վերջնական մասնատվածութեան: Դպրոցական դասընթացում հնարավորութիւն չկա այն բոլոր քաղաքական կազմավորումների պատմութիւնը շարադրել, վորոնց բաժանվեց Կիւսյան պետութիւնը XII դարում: Սահմանափակվելով կարևորագույն յերկրների պատմութեամբ (Գալիցիա—Վոլինյան, Նովգորոդյան և Սուզդալյան), անհրաժեշտ է նշել այդ բոլոր յերկրների համար Ֆեոդալական հարաբերութիւնների զարգացման ընդհանուր պրոցեսը և նրա առանձնահատկութիւնն այդ իշխանութիւններից յուրաքանչյուրում: «Ռյուրիկովիչներ իմպերիայի» այդ խոշոր բեկորներում XIII դ. սկզբին նկատվում է անցում դեպի նոր ավելի կայուն քաղաքական կազմակերպութեան (քաղաքների հետ իշխանների դաշինքի սաղմեր Գալիցիայի և Սուզդալյան յերկրներում), բայց Չինդիա-խանի ու Բաթուլի զորքերի սարսափելի հարվածների տակ այդ պրոցեսը ժամանակավորապես կանգ առաւ:

Չսահմանափակվելով ուստական յերկրների պատմութեամբ, այդ նույն բաժնում հարկաւոր է ուշադրութիւն դարձնել Կիւսյան պետութեան «ժամանակակիցների» վրա կովկասում և Միջին Ասիայում: Կովկասի և Միջին Ասիայի համար արաբների տիրապետութիւնից ազատագրվելու և մոնղոլական նվաճումների միջև բնկած ժամանակամիջոցը բացառիկ կարևոր դարաշրջան է (Հայաստանը Բագրատունիների որով, XII—XIII դ. դ. Վրաստանը, Միջին Ասիան Մամանիդների և թյուրքերի որով):

Այդ յերկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման ուսումնասիրութիւնը, ի հարկէ, պետք է դնա ծանոթութեամբ նրանց կուլտուրայի հետ՝ ամենախոշոր ստեղծագործութիւններում (որինակ, «Վազրենավորը», «Սասունցի Դաւիթը»):

Այս բաժնի հաջորդ մասի (XIII—XV դ. դ.) կառուցումն ամենամեծ դժվարութիւններն է ներկայացնում, վորովհետև մեր յերկրի հիմնական մասերի համար այդ դարերը մաքսիմալ Ֆեոդալական մասնատվածութեան ժամանակն է: Միջնակարգ դպրոցում սահմանափակվելով այդ շրջանի միայն ամենից ավելի խոշոր քաղաքական կազմավորումների պատմութեամբ, կարելի յե XIII—XV դ. դ. պատմութեան մեջ նշել հետևյալ հիմնական հարցերը.

1. Մոնղոլական նվաճումը.
2. Ռուս ժողովրդի պայքարը դերմանական և չվեղական հափշտակիչների դեմ.
3. Լիտվայական մեծ իշխանութիւնը.
4. Վրադիմիրյան մեծ իշխանութիւնը.
5. Ռուսական յերկրների միավորման սկիզբը

6. Լենկթեմուրի պետութիւնը և Վուսկե Հորդայի բաժան-բաժան լինելը :

Այսպիսով այս բաժնում շարադրվում է մեր յերկրի ժողովուրդների կենդանի, պայքարով լի կոնկրետ պատմութիւնը XIII—XV դարերում : Ներքին պատմութիւնը հարցերը լուսարանում են անքակտել միասնութիւնը մեջ արտաքին պատմութիւնը հետ, ու տարերկրյա Ֆեոդալները բաղմաթիւ փորձերի՝ իրենց լուծը մեր յերկրի ժողովուրդների վրին դնելու պատմութիւնը հետ :

Շարադրումը սկսվում է թաթար-մոնղոլական նվաճման պատմութիւնը : Կուլտուրայի բոլոր խոշոր կենտրոնները մեր յերկրի տերիտորիայի վրա Չինդիկ-խանի ու Բաթույի հրոսակախմբերի ճարակը դարձան : Հասնում են մոնղոլական լծի դարերը— «Մոնղոլական տարիութիւնը արյունոտ կեղտը» (Մարքս) : Թաթարական տիրապետութիւնը ծանր փորձանք էր Անդրկովկասի համար, վորտեղ մոնղոլական նվաճողները վտանակոխ արին XII դ. փայլող կուլտուրայի աճումը : Միայն Վուսկե Հորդայի կենտրոնում (XII—XIV դ. դ.) և Միջին Ասիայում Լենկթեմուրի ժամանակներում նկատվում է կուլտուրայի կարճատե վերելք : Բայց այդ վերելքը հիմնվում էր նվաճված յերկրների զիջատիչ թալանի վրա և չհասցրեց մինչև ամուր քաղաքական կազմավորումների ստեղծմանը :

Թաթարական պետութիւնները թուլացած լինելով փոխադարձ պայքարից, XV դարում բաժան բաժան են լինում և կորցնում են իրենց նախկին նշանակութիւնը :

Մինչդեռ բարձրանում է Ռուսիան, միավորելով

իր ուժերը թաթարների ու արևմտյան Ֆեոդալներին դեմ պայքարելու համար :

Միասնութիւնը տրադիցիաները, վորոնք նույնիսկ ամենամեծ Ֆեոդալական մասնատվածութիւնը ժամանակ ել վերջնականապես չեղին անհայտացել (այս տեսակետից կարևոր է ընդդէմ վլադիմիրյան մեծ իշխանութիւնը նշանակութիւնը), նոր, ավելի ամուր սոցիալ-տնտեսական հիմք դտան : Ռուսական յերկրները միացման պրոցեսը Մոսկովայի շուրջը, վորը արագացալ ինքնապաշտպանութիւնը պահանջներով, նախապատրաստում է ռուսական ազգային պետութիւնը ստեղծում :

Գիշատիչ նվաճողների և նրանց դաշնակից տեղական աշխարհիկ ու հոգևոր աւագանու դեմ մղած ռուս ժողովրդի հերոսական պայքարի պատմութիւնը այդ պատճառով պետք է դասընթացի այդ մասում կենտրոնական տեղ դրալի : Ռուս ժողովրդի պայքարը դերմանական ասպետական հրոսակախմբի դեմ, ապստամբութիւնները թաթարների դեմ Նովոգորոդում և Տվերում, Կուլիկովյան մարտը— ահա պատմութիւնը այդ մասի ամենից ավելի կարևոր էջերը :

#### IV. ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՏԵՂ-ԾՈՒՄԸ

Ռուսական ազգային պետութիւնը կազմավորումը— դասընթացի այս բաժնի հիմնական հարցը—տրվում է վորպէս մեծ կարևորութիւն ունեցող առաջադիմական փաստ : Այդ ժամանակ Մոսկովայի ինքնակալութիւնը առաջադիմական էր թաղավորական իշխանութիւնը նման Արևմուտքում «համընդհանուր խառնաշփոթու-

թյան» և Ֆեոդալական խռովությունները դեմ մղած նրա պայքարը ժամանակ: «Նա (Թաղավորական իշխանությունը) կարգի ներկայացուցիչն էր անկարգության մեջ, կազմավորվող ազգի ներկայացուցիչը հակառակ մասնատման պատճառով վաստակյալ պետությունները» (Ենդելս):

Ռուսական յերկրները հավաքումն արագանում է ուժերը միավորման անհրաժեշտությամբ Վոսիկե Հորդայի և արևմտյան թշնամիների դեմ պայքարելու համար: «Ուղեւային իշխանները հրատակեցումը ձեռք ձեռքի տված միասին էր դնում թաթարական լծից ազատարվելու հետ և վերջնականապես ամրացվեց Իվան III կողմից» (Ենդելս):

Բայց ցույց տալով ուստական ազգային պետության կազմավորման առաջադիմական նշանակությունը, հարկավոր է ընդգծել, վոր այդ պետությունը ճորտատիրական էր: Հենց առաջին «Համայն Ռուսիայի թաղավորը» ուժեղացնում է գյուղացիներին հողին ամրացնելը, սահմանափակելով մի Ֆեոդալից մյուսին անցնելը միայն Յուրիի որով:

Չպետք է մոռանալ նաև Մոսկովյան պետության քաղաքական կազմակերպության ունակցիոն ձևերը, բյուրանդիականության արդիցիաները, վորոնք մտահոգված կերպով պաշտպանում էին մոսկովյան թաղավորները ու նրանց դպիրները կողմից:

#### V. ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ XVI ԴԱՐՈՒՄ

Դասընթացի այս բաժնի կենտրոնական հարցը հանդիսանում է բազմազգային պետության կազմա-

վորման պրոցեսը, խառը պետության կազմավորումը, վորը բաղկացած էր «մի շարք ժողովուրդներից, վորոնք դեռևս ազգ չէին կազմվել, բայց արդեն միավորվել էին մի ընդհանուր պետության մեջ» (Ստալին): Հարկավոր է բնութագրել Մերձվոլգյան շրջանի ու Արևմտյան Սիբիրի ժողովուրդները մինչև Մոսկովյան թաղավորության կողմից նվաճելը և նվաճելուց հետո:

Մոսկովյան պետության ներքին պատմության հարցերից պետք է ուշադրություն դարձնել ա) ինքնակազմության ամրացման վրա՝ իշխանները ու բոյարները դեմ նրա մղած պայքարում, բ) գյուղացիների ճորտացման ուժեղացման վրա:

XVI դարի կուլտուրային և կենցաղին ծանոթանալիս կարևոր է ցույց տալ Արևմուտքի համեմատությամբ Ռուսաստանի կուլտուրական հետամնացությունը և նույն ժամանակ ընդգծել ուստական յերկրները միավորման արտացոլումը կուլտուրայում (հարկավոր է առանձնապես ուշադրություն դարձնել ուստական ազգային արվեստի սկզբի վրա):

#### VI. ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ

Դասընթացի յեղբարիակիչ բաժինը սկսվում է XVII դ. սկիզբի գյուղացիական պատերազմի և լեհ-չիլեղական ինտերվենցիայի պատմությունով:

Գյուղացիական պատերազմի պատճառների պարզարանումը ստիպում է կանդ առնել Մոսկովյան պետության սոցիալական պատմության կարեւոր-

րազուէն հարցել վրա— «ճորտատիրական իրավունքը» ծագման վրա :

Շատ նպատակահարմար է այդ կապակցութեամբ համառոտակի կրկնել ճորտատիրութեան ծագման և զարգացման պատմութիւնը մինչև XVI դարը և պարզել այդ պրոցեսի առանձնահատկութիւնը Արևելեան Յեւրոպայում արեւմտա-յեւրոպական յերկրներէ համեմատութեամբ :

Սոցիալ-տնտեսական ճգնաժամի հենց ընթացքում սովորողների ուշադրութիւնը կենտրոնանում է ամենից առաջ դյուղացիական պայքարի վերելքի վրա ճորտատերերի դեմ, վորն ամենից ավելի ուժեղութեան է հասնում Բուրժուազիայի շարժման մեջ, վորն ընկեր Ստալինի կողմից մի շարքում է դասուում ուս դյուղացիների խոչորագույն ապստամբութիւնների հետ (Ռադիկի ու Պուգաչովի դեկաւարութեամբ) :

Յերկրորդ հարցը, վորին ուշադրութիւն է հասկացվում այդ թեմայի շարադրման ժամանակ, դա լեհական պաների փորձն է իրենց յենթարկելու ուսական պետութիւնը : Այդ փորձն անհաջողութիւն է կրում, չնայած բոյարութեան վերին շերտի դավաճանութեանը, վորոնք դործարքի մեջ էյին մտել լիտի դավթողների հետ : Ժողովրդական լայն շարժումը տանում է դեպի Մոսկւայի ազատագրումը ինտեր-միենտներից և ազգային պետութեան վերականգնումը :

Պետք է ընդգծված լինի Նիթինովդորոջան աշխարհագրորի դեկաւարների՝ Մինինի ու Պոթարսկու գրական դերը, վորոնք կարողացան ղլխավորել և հաղթանակի հասցնել ուս ժողովրդի հզոր շարժումը ինտերմիենտների դեմ :

Անցնելով ճորտատիրական պետութեան պատմութեանը, ծրագիրը կանգ առնում սկզբից առաջին Ռոմանովի կառավարման վրա, վորը բաւականաչափ պարզութեամբ բաց է անում նոր դինաստիայի ճորտատիրական դասակարգային հիմքը : Այնուհետև Ալեքսեյ թաւափորի «խոսվահուլոյ» ժամանակից խոչոր սոցիալական շարժումներին անցնելուց առաջ ծրագիրը տալիս է Մոսկւայան պետութեան սոցիալ-տնտեսական զարգացման բնութագրերը XVII դարում : Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել XVII դարի տնտեսական նոր դժերը (տեղական շուկաների միափորումը համաուսականի մեջ) և նրա հետ կապված փոփոխութիւնները քաղաքի ու դյուղի աշխատավոր մասաների դրութեան մեջ : Այս հիմքի վրա հասկանալի է դառնում քաղաքային ապստամբութիւնների թաւր XVII դ. կեսին : Նրանց պատասխան է հանդիսանում 1649 թ. Չեմսովային ժողովի որենադրութիւնը և պրիկազային կարգերն ամրացնելու համար ձեռք առած միջոցները : Մոսկւայան պետութեան բնութագրումից ծրագիրն անցնում է յեկեղեցուն, վորը XVII դարում ճորտատիրական պետութեան որդաններից մեկն էր, և հակայեկեղեցական շարժումներին (պառակտումը) :

Այս բաժնում չափազանց մեծ տեղ է բռնում իՍՀՄ-ի առանձին ժողովուրդների պատմութիւնը : Ծրագիրը սկսում է այն ժողովուրդների անցյալից, վորոնք մասամբ կամ ամբողջովին XVII դարում մտել էյին Մոսկւայան պետութեան կազմի մեջ (Ուկրաինան և արևելեան Սիբիրը) : Ուկրաինայի և Բելոուսիայի պատմութեան մեջ բնականորեն կենտրոնական տեղը

պետք և հատկացվի ուկրաինական և բելոռուսական ժողովուրդներին փառավոր պայքարին լեհական պանսերի դեմ, վորն ամենամեծ լարվածութեանը հասավ XVII դ. կեսին:

Արևելյան Սիբիրի ժողովուրդները պատմութեան մեջ հարկավոր և մանրամասնորեն կանգ առնել յերեք ամենեց ավելի խոշոր ժողովուրդներին՝ եվենկներին, յահուտներին ու բուրյատները պատմութեան վրա:

Մերձվորդյան շրջանի ժողովուրդները պատմութեանը շարադրելով, ծրագիրն անցնում և XVIII դ. խոշորագույն դուրացիական շարժմանը, Ս. Ռազինի գեղավարութեամբ կայացած դուրացիական շարժմանը, վորի մեջ ճորտատիրական պետութեան դեմ մղած պայքարում միանում են ինչպես աշխատավորութեան դանազան խմբերը (դուրացիութեանը և պոսադի ստորին շերտերը), այնպես ևլ դանազան ժողովուրդները (ուսանները, թաթարները, չուվաշները, մորդվան):

Այս բաժինն ավարտվում և այն ժողովուրդները պատմութեան շարադրումով, վորոնք XVII դարում չէին մտնում Մոսկովյան պետութեան կազմի մեջ (Անդրկովկասի և Միջին Ասիայի ժողովուրդները): Միջին Ասիայի և Կովկասի տնտեսական անկումը XVI—XVII դ. դ., այդ մարզերի բաժանումը բազմաթիվ կիսապետութեաններին և չվերջացող Փեոդալական խռովութեանները, վորոնք բարդանում էին թյուրքական և նախկին նվաճողների ներխուժումով, կազմում են այդ ժողովուրդները պատմութեան բովանդակութեանը:

Կարևոր և նշել, վոր XVII դարում Մոսկովյան պետութեան և Միջին Ասիայի ու Կովկասի Փեոդալներին միջև ուժեղանում են տնտեսական կապերը և դիվանագիտական հարաբերութեանները:

Վերջացնելով VIII դասարանի դասընթացը, շատ ուղաակար և կրկնութեան պարագմունքներին վերհիշել ատանձին ժողովուրդների պատմութեան ամբողջ նյութը մինչև XVIII դարը (վելիկոռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, Կովկասի, Միջին Ասիայի, Մերձվորդյան շրջանի ու Սիբիրի ժողովուրդները):

# ԾՐԱԳԻՐ ԽՍՀՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(VIII ԴԱՍԱՐԱՆ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Մեր հայրենիք ԽՍՀՄ-ն — հաղթանակած սոցիալիստիկ առաջին յերկիրն է:

ԽՍՀՄ-ի պատմության ուսումնասիրությունը խընդիւրնեցը:

ԽՍՀՄ-ի պատմությունը վերապես ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմություն:

## I. ՆԱԽԱԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ (8 ժամ)

Մեր յերկրի հեռավոր անցյալի ուսումնասիրության աղբյուրները: Խորհրդային հնագիտության հաջողությունները:

Քարեդարը ԽՍՀՄ տերիտորիայում:

Նախնադարյան-համայնական կարգերը:

Վաղ մետաղի կուլտուրաները: Դասակարգերի ծագումը:

Ստրկատիրական պետութայուններն Անդրկովկասում — Ուրարտու պետությունը: Վրացական և հայկական ցեղերի կազմավորումը: Անդրկովկասի հելլենական պետությունները: Հայաստանը (Տիգրան

II որոք) · հին Իբերիան: Ալբանիայի ժողովուրդները:

Միջին Ասիան հին ժամանկներում: Հողագործական համայնքները Միջին Ասիայի գետային ոռոգիչներում: Դասակարգային հասարակության ծագումը: Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները: Միջին Ասիայի ժողովուրդների ապստամբությունները հունամակեդոնական նվաճողների դեմ:

Մերձսևծովյան տափաստանների ժողովուրդները մինչև III դ. (մ. թ. ·): Մերձսևծովյան տափաստանները և նրանց հնագույն բնակչությունը:

Հուն ստրկատերերի զաղույթները Սև ծովի ափերին: Բոսպորյան թագավորությունը:

Սարուկների ապստամբությունը Բոսպորյան թագավորության մեջ:

Ստրկատիրական հասարակության կործանումը հյուսիսային Մերձսևծովյան յերկրում:

Քոչվորների շարժումը IV—VII դ. դ. մ. թ. ·: Հունների շարժումը գեպի Արևելյան Յեփրոսա: Ատտիլան:

Հոնական տերության քայքայումը: Խաղարները:

Խաղարական կազանատը: Վոլգայի բուլղարները: Խաղարների և բուլղարների հարաբերություններն արարների հետ:

Ֆեոդալական պետութայունների կազմավորումն Անդրկովկասում և Միջին Ասիայում: Ֆեոդալական կարգերի զարգացումը Հայաստանում և Վրաստանում:

Բյուզանդիայի ազդեցությունը և քրեատոնությունների ընդունումը: Անդրկովկասի նվաճումն արարների կողմից: Պայքարը արարական տիրապետության

դեմ: Խուրբամիտների ապստամբությունն Ալբանիայում Բարեկի ղեկավարութեամբ:

Վրացական և հայկական Ֆեոդալական իշխանությունների կազմավորումը:

Արարական տիրապետութիւնը Միջին Ասիայում և պալքարը նրա դեմ: Մուկաննայի ապստամբությունը: Ինքնուրույն ֆեոդալական պետութիւնների կազմավորումը Միջին Ասիայում: Սամանիդները:

Սլավոններն ու նրանց հարևանները VI—VIII դ. դ.: Հնագույն տեղեկութիւններ սլավոնների մասին: Արևմտյան, հարավային և արևելյան սլավոնները VII—VIII դարերում: Արևելյան սլավոնների հարեւանները:

## II. ԿԻԵՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (4 ժամ)

Կիեվյան պետութեան կազմավորումը և Կիեվի առաջին իշխանները: Տոհմական կարգերի քայքայումը: Հողային համայնքը (վերվ): Արևելյան սլավոնների իշխանութիւնները: Քաղաքները:

Սլավոնների կրօնը: Վարչադեմերի ասպատակութիւններն Արևելյան Յեվրոպայի վրա:

Արևելյան սլավոնների միացումը Կիևի իշխանների իշխանութեան տակ: Ուկրի արշավանքները Բյուզանդիայի վրա և հույների հետ կնքած պայմանագրերը: Հարկի համաձայնումը (սոլյուդյե): Իշխան Իգորը: Իշխանուհի Ուլան: Սվյատոսլավի նվաճումները:

Կիևի պետութեան կառավարումը X դարում:

«Վասսալտետ առանց լեների» (Մարքո):

Կիևի պետութեան ուժեղացումը X դարի վերջում և XI դ. սկզբում: Իշխան Վլադիմիրը: Քրիստոնե-

յություն մտցնելը: Քրիստոնեյության նշանակութիւնն արևելյան սլավոնների միացման և Կիևյան Ռուսիայի կուլտուրայի զարգացման համար:

Վլադիմիրի վորդինները պալքարը Կիևի համար:

Լեհական Բոլեսլավ թագավորի ներխուժումը:

Յարոսլավի հաղթանակը: Քրիստոնեյության վերջնական հաղթանակը: Առաջին վանքերը և տարեգրութեան սկիզբը: «Ռուսկայա Պրավդա»:

## III. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՖԵՈՒԱԼԱԿԱՆ ՄԱՍՆԱՏՈՒՄԸ (19 ժամ)

1. ԿիՅեվի ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐՈՂՈՒՄԸ (4 ժամ):

Ֆեոդալական հարաբերութիւնների հաղթանակը Կիևի պետութեան մեջ: Յերկրների բաժանումն Յարոսլավ Իմաստունի վորդինների միջև:

Ֆեոդալական յերկպառակութիւնները: 1068 թ. Կիևի ապստամբութիւնը: Պայքարը սլոլովցիների դեմ:

Իշխանական, յեկեղեցական և բոյարական հողատիրութեան աճումը: Ստրկատիրութիւնը Կիևյան Ռուսիայում: Մաերդները: Զակուպները:

Կիևյան Ռուսիայի քաղաքները XI—XII դ. դ.:

Արհեստները: Քաղաքային չքավորութեան պայքարը Ֆեոդալների և վաշխատուների դեմ: 1113 թ. Կիևի ապստամբութիւնը: Վլադիմիր Մոնոմախի կանոնադրութիւնը պարտքերի և դակուպների մասին:

Վլադիմիր Մոնոմախի իշխումը: Նրա պայքարը սլոլովցիների դեմ: Ֆեոդալական մասնատվածութեան սկիզբը:

Ռուսական իշխանությունների պետական կառուցվածքը XII դ. : Իշխանը և զուգազը : Վեչն : Հարավային Ռուսիայի անկումը : Բելինաները տափաստանի դեմ տարվող պայքարի մասին :

Ռուսական յերկիրը XII դ. «Ասք Իզորի գնդի մասին» գրվածքի նկարագրությունը :

Կիևյան Ռուսիայի կուլտուրան :

Կիևի պետությունը նշանակությունը ռուսական, սեկրանական և բերուսական ժողովուրդների պատմության մեջ :

## 2. ՖԵՆՈԴԱԼԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XII—XIII ԴԱՐԵՐՈՒՄ (6 ԺԱՄ) :

Ռուստով—Սուզդալյան իշխանությունը XII—XIII դ. դ. : Ռուստով—Սուզդալյան յերկրի բնակչությունը : սլավոններ, մորդվա, մերյա, վես : Հին սլավոնական քաղաքները (X դ.) : Մեերգների ապստամբությունը Բելոզյորյան յերկրամասում 1071 թ. : Խոչոր հոգատիրության աճումը XI—XII դ. դ. :

Յուրի Դոլգորուկին : Մոսկվայի հիմնադրման սկիզբը : Կիևի գրավումն Անդրեյ Բոգոլյուբսկու կողմից 1169 թ. : Անդրեյ Բոգոլյուբսկու պայքարը տեղական բոյարների դեմ :

Վլադիմիր—Սուզդալյան իշխանության հետագա ուժեղացումը : Պայքար Նովգորոդի դեմ : Մորգովական հոգերի դավթումը :

Նովգորոդի յերկիրը XII—XIII դ. դ. : Մեծ Նովգորոդը և նրա տիրակալությունները :

Առևտուրն Արևմտյան Յեվրոպայի հետ :

Նովգորոդի բոյար—հոգատերերը, վաճառականները, սեագործ մարդիկ (черные люди—խաժամուժ) 1136 թ. : ապստամբությունը և Նովգորոդի բոյարական հանրապետության սկիզբը :

Վեչնն : Բոյարական ոլիգարխիայի տիրապետությունը :

Սեագործ մարդկանց պայքարը բոյարների դեմ : Նովգորոդի կուլտուրան :

Պսկովը :

Գալիցիա—Վոլինյան իշխանությունը XII—XIII դ. դ. : Գալիցյան բոյարության ուժը : Գալիցյան և Վոլինյան իշխանությունների միացումը իշխան Ռոմանի կողմից : Ռոման իշխանի պայքարը Գալիցիայի բոյարությունից դեմ :

Դանիել Ռոմանովիչի իշխումը : Քաղաքների աճումը : Գալիցյան իշխանության թուլացումը XIII դ. վերջին :

Անդրկովկասը X—XIII դ. դ. : Ֆեոդալական հարաբերություններն Անդրկովկասում :

Ֆեոդալական Հայաստանի տրոհվելը և նրա նվաճումը թյուրք-սելջուկների կողմից :

Սելջուկների արշավանքը Վրաստան : Վրաց ժողովրդի պայքարը սելջուկների դեմ : Դավիդ Շինարարը : Ազատագրում թյուրքական կախումից : Պետություն ամրապնդումը Ֆեոդալների դեմ մղած պայքարում :

Թամարայի կառավարումը : Վրացական մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելին :

Աղբբեջանը XI—XII դ. դ. : Աղբբեջանական Ժողովրդի կազմվելը : Նիզամի և Պականի բանաստեղծները :

Միջին Ասիան X—XII դ. դ. : Միջին Ասիայի նվաճումը թյուրքերի կողմից : Ֆեոդալական ճնշման ուժեղացումը : Միջին Ասիայի քաղաքները XII—XIII դ. դ. : Քաղաքային ապստամբությունները Ֆեոդալներին դեմ :

### 3. ՄՈՆՂՈՒԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ (2 ժամ)

Զինգիդ-խանի պետությունը : Տոհմական կարգերի քայքայումը : Թեմուչինը : Թեմուչինին Չինգիզ-խան հռչակելը : Պատերազմը Չինաստանի դեմ :

Միջին Ասիայի և Անդրկովկասի նվաճումը մոնղոլների կողմից : Արշավանքը դեպի Սևծովյան տափաստանները : Պսլովյանների ջախջախումը :

Ճակատամարտը Կալկա դեպի մոտ (1223 թ.) :

Չինգիզ-խանի պետությունը : Նրա բաժանումը ուլուսների : Բաթու խանի արշավանքն Արևելյան Յեվրոպայի վրա : Բուլղարական թագավորություն անվերջումը թաթարների կողմից : Ռուսական յերկրների նվաճումը Բաթու խանի կողմից :

Վոսիկ Հորդան և քաքարական լուծը : Վոսիկ Հորդան : Ֆեոդալական հարաբերությունները Վոսիկ Հորդայում : Թաթարների կողմից իսլամի ընդունումը :

Թաթարական լուծը Ռուսիայում

Թաթարներին արվող հարկը : Ռուսական իշխանների և հոգևորականություն ծառայությունը թա-

թարական խանի մոտ — «Մոնղոլական ստրկություն արյունոտ կեղաք» (Մարքս) : Ապստամբությունը թաթարներին դեմ : Թաթարական տիրապետությունը Միջին Ասիայում և Կովկասում :

### 4. ՊԱՅԳԱՐԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՇՎԵԴԱԿԱՆ ՀԱՓՇՏԱԿԻՉՆԵՐԻ ԳԵՄ (1 ժամ)

Գերմանացի ստպետների հարձակումը Արևելքի վրա :

Լիվոնիայի ցեղերի ստրկացումը գերմանական հափըչաակիչների կողմից :

Ներխուժումը ուսական յերկրներ : Ալեքսանդր Նեվսկին : Նեվսկի ճակատամարտը և չվեդների ջախջախումը : «Սաոցե ջարդը» 1242 թ. Չուգ լճի վրա : Մարքսը «չուն-ասպետների դեմ» ուս ժողովուրդի տարած պայքարի մասին :

### 2. ԼԻՏՎԱԿԱՆ ՄԵՆ ԻՇԵԱՆՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)

Լիտվական ցեղերը մինչև XIII դ. : Լիտվական յերկրների միացումը Մինգոլիի իշխանություն տակ : Գեդեմինը : Արևմտյան ուսական յերկրների հափըչաակումը : Ուրբերդը : Մերձդնեպրյան յերկրի հափըչաակումը : Բեխուուսական և Ուկրաինական ժողովուրդները Լիտվայի իշխանություն տակ :

Յադայան : Լիտվայի և Լեհաստանի ուսիան (միությունը) (1386 թ.) : Լիտվայի մկրտությունը : Լիտվացիների պայքարը ուսիայի դեմ : Վիտովտ : Սմոլենսկի զավթումը :

Գերմանացիների ջախջախումը Գրյունվալդի մոտ :

Լիտվական մեծ իշխանութեան սոցիալական կարգերը: Խոշոր ֆեոդալները և շլյախտան:

Գյուղացիները Լիտվիայում: Քաղաքը: Ազգային և կրոնական ճնշումները լիտվական իշխանութեան մեջ:

6. ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(1 ժամ)

Հյուսիս-Արևելյան Ռուսիայի իշխանությունները: Իշխանական, բոյարական և յեկեղեցական հողատիրությունը Հյուսիս-Արևելյան Ռուսիայում:

Գյուղացիների ֆեոդալական շահագործումը:

Մասնատումը բաժնեկալվածքներին: Բոյարական դուժա: Կուսակալները և զավառամասի պետերը: Վլադիմիրյան մեծ իշխանությունը:

7. ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՍԿԻԶ-ԲԸ (ՄՈՍԿՎԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ) (2 ժամ)

Մոսկովյան իշխանության ուժեղացումը: Մոսկովյան իշխանության աճումը: Պայքարը Մոսկվայի և Տվերի միջև: Իվան Կալիտան:

Ռուսական հողերի «հավաքման» սկիզբը Մոսկովյան իշխանների կողմից:

Թաքարների դեմ տարած պայքարի սկիզբը: Դեմիտրի Գոնակոյ: Մոսկովյան բոյարությունը: Պայքարը Նիժնիգորոդ-սուզդալյան, Տվերի և Ռյազանի իշխանների դեմ: Կուլիկովյան ճակատամարտը: Թոխ-

Թամիշի արշավանքը Մոսկվայի վրա: Վասիլի IV իտվարի հաղթանակը բաժնեկալվածքային իշխաններին վրա:

Հյուսիս-Արևելյան Ռուսիայի կուլտուրան XIV դ. և XV դ. սկզբին:

8. ԼԵՆԿՅԵՄՈՒՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՎՈՍԿԵ  
ՀՈՐԳԱՅԻ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ԼԻՆԵԼԸ (1 ժամ)

Լենկյեմուրի պետությունը: Լենկյեմուրի բարձրացումը: Լենկյեմուրի արշավանքները: Լենկյեմուրի պետությունը: Սամարղանդը:

Միջին Ասիայի կուլտուրան Լենկյեմուրի որոք: Լենկյեմուրի պետության արոհումը:

Միջին ասիան ուղբեկական խաների որոք:

Վոսկե Հորդայի տրոհումը: Կազանի, Ղրիմի և Սիբիրի խանությունների կազմավորումը: Ղազախները:

IV. ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ  
(5 ժամ)

Իվան III-ի ՅԵՎ ՎԱՍԻԼԻՅ III-ի ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիս-Արևելյան Ռուսիայի միավորումը: Նովգորոդի անկումը XV դ.: Դասակարգային պայքարը Նովգորոդում XV դ.: Դավաճան-բոյարների դաշինքը Լիտվայի հետ: Նովգորոդյան անկախության վերջը: Նովգորոդյան յերկրների միացման նշանակությունը:

Տվերի միակցումը: Ռուսական ազդային պետութեան ստեղծումը:

Ազատագրումը քաքարական լծից: Իվան ԻԻ-ի պայքարը Վոսկե Հորդայի դեմ: Գաշինքը Ղրիմի հետ: Թաթարական իշխանութեան տապալումը: Վոսկե Հորդայի վերջը:

Ռուսական արևմտյան յերկրների համար մղած պայքարի սկիզբը: Իվան ԻԻ-ի պայքարը Լիտվայի դեմ արևմտյան ռուսական յերկրների համար: Լիվոնական ասպետների միջամտութիւնը և նրանց ջախջախումը: Մոսկովյան պետութեան միջազգային դրութիւնը:

Մոսկովյան պետութիւնը XV դ. վերջին: Իվան ԻԻ-ի դատաստանազերբը: Ադրբայիան բանակի վառուցւածքը: Կալվածատիրական սիստեմը: Կալվածատերերը և դյուզայնները:

Գյուղացիների շահագործման ուժեղացումը: Փողային բահրայի յերևան դալը: Կոռային տնտեսութիւնը վանքերում:

Յուրիի սրը:

Մոսկովյան թագավորի իշխանութիւնը:

Իյուզանդական ազդեցութիւնը: Արևմտյան վարպետները Մոսկովայում: Վեճ յեկեղեցական հողերի մասին:

Վասիլիյ ԻԻ-ի իշխանութիւնը: Վերջին բաժնեկալւածքների միակցումը (Պսկով յեյազան): Մոսկոնսկու հետ նվաճումը Լիտվայից: Ուսմունք՝ մոսկովյան թագավորների ինքնակալական իշխանութեան մասին: «Մոսկվան— յերրորդ Հոռոմ»:

V. ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ XVI դ. ՅԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԲԱԶՄԱԶԳ ՊԵՏՈՒԹՅԱՆ (6 ժամ)

Իվան IV ԹԱԳԱՎՈՐՈՒՄԸ

Պայքարը փեոզայների միջև իշխանութեան համար XVI դարի կեսերին: Բոյարական կառավարումը: Իվան IV՝ կողմից ցարական տիրոջսի ընդունումը: 1547 թ. աստամբուլութիւնը:

Ադրբայիանութեան սրահանջները — (Պերեսվետով): Ձեմսովոյական ինքնավարութեան կազմակերպումը: Կերակրման վերացումը: Կալվածքային սիստեմը:

Իվան IV ցարի նվաճումները: Կազանի խանութիւնը XVI դ. կեսին: Կազանի նվաճումն Իվան IV կողմից:

Մերձվորդյան ժողովուրդների նվաճումը (մարի, չուվաշներ, մորդվայի): Աստրախանի դրավումը: Առաջադարձումը դեպի Կովկաս: Ղրիմի խանութիւնը: Թաթարների ասպատակութիւնները: Հարավային ծայրերի վրէ պաշտպանութիւնը: Պատերազմի սկիզբը Լիվոնիայի դեմ: Շվեդիայի, Լիտվայի և Լեհաստանի միջամտութիւնը:

Ուլրիչնինա: Բոյարութեան դեմ պայքարելու համար Ուլրիչնինայի կազմակերպումը: Բոյարական հաստիքութեան ջախջախումը: Ֆեոզայական մասնատւածութեան մնացորդների վոչնչացումը: Գյուղացիների քայքայումն ուլրիչնինայի տարիներում: Ուլրիչնինայի վերացումը: Ուլրիչնինայի նշանակութիւնը ինքնակալ

իշխանութեան և կենտրոնացած պետութեան ամբողջ-  
ման համար :

Իվան IV-ի քաղաքական վախճանը : Պայքարը  
Մերձբայթեան յերկրի և Բելտուսիայի համար : 1566  
թ. զեմսովոյի ժողովը : Լիտվայի միավորումը Լե-  
հաստանի հետ : Լիվոնիայն պատերազմի վերջը :

Արևմտյան Սիբիրի ժողովուրդների նվաճումը :  
Արևմտյան Սիբիրի ժողովուրդները — մանսեր (վո-  
գուլներ), խանտեր (ոստյակներ), նեններ (սամոյեդ-  
ներ) : Նրանց հասարակական կարգերը :

Ստրոգանովները Կամայի վրա : Միբրախան թա-  
ղափորութեանը : Յերմակի արշավանքը և Կուչումի  
թողափորութեան նվաճումը : Արևմտյան Սիբիրի  
միակցումը : Մորթեհարիի (յասակ) դանձումը :

Ռուսաստանի բազմազգ պետութեան դառնալը  
XVI դ. վերջում :

Մոսկովյան պետության առևտուրը XVI դ. Ար-  
հեստի և տեղական շուկաների աճումը : Առևտուրն  
Արևելքի հետ : Բելոմորյան ճանապարհի բացումը :  
Անգլիական և հոլանդական վաճառականները Մոսկով-  
յան պետութեան մեջ :

Կալուտրան և կենցաղը XVI դ. յերկրորդ կեսին :  
Քրտանեական կենցաղը ըստ Դոմոստրոյի :

Կուլտուրական հետամնացութեանը : Գրքերի  
սպաղրութեան սկիզբը Մոսկովայում (Իվան Ֆեոդո-  
րով) : Գրականութեանը XVI դարում : Ռուսական ազ-  
գային արվեստի սկիզբը : Ճարտարապետութեանը XVI  
դարում :

## VІ. ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XVІI ԴԱՐՈՒՄ (20 ժամ)

1. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ԼԵՀ—  
ՇՎԵՂԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՅՈՒՆ XVІI Դ. ՍԿԶՐՈՒՄ  
(5 ժամ)

Մոսկովյան պետությունը գյուղացիական պատե-  
րազմից առաջ : Կալվածատերերը և դյուղացիները XVI  
դ. : Գյուղացիների հեռացման արդելումն Յուրիի ուրը :  
«Արդելված տարիները» : Գյուղացիական փախուստնե-  
րը : Կաղակները :

Ֆեոդր ցարը և կառավարիչ Բորիս Գոդունովը :

Պատրիարքութեան սահմանումը : Պատերազմը  
Շվեդիայի դեմ : Ուլլինյան դործը : 1597 թ. հրովար-  
տակը փախած գյուղացիների մասին : Բորիս Գոդու-  
նովին թագավոր ընտրելը : Բորիս Գոդունովի պայքա-  
րը բոյարներին դեմ : Խլսակա Կոստրապի ապստամբու-  
թեանը : Գյուղացիական պատերազմի սկիզբը :

Լեհական պաների կողմից ռուսական պետությունը  
ստրկացնելու առաջին փորձը : Կաղակային-դյուղացիա-  
կան ապստամբութեանները հարավում Գոդունովի կա-  
ռավարութեան դեմ : Կեղծ Դիմիտրիի շարժումը լեհերի  
հետ միասին Մոսկովի վրա : Հեղաշրջումը Մոսկվայում  
Կեղծ Դիմիտրի I-ը — լեհական պաների դորձակալ : Լե-  
հերի տիրակալութեանը Մոսկովայում : Ժողովրդական  
ապստամբոնեթեանը լեհերի դեմ : Վասիլի Շույսկու-  
րոյարների ցարի դահակալութեանը :

Գյուղացիական ապստամբությունը Բոլոտնիկովի  
առաջնորդությամբ : Գյուղացիների և մանր ծառայող  
մարդկանց ապստամբությունը Հյուսիսային Ուկրաին-  
նայում : Իվան Բոլոտնիկովը գյուղացիների առաջ-  
նորդ : Բոլոտնիկովի արշավանքը Մոսկվայի վրա : Բո-  
լոտնիկովի սրբաբուխությունը Մոսկվայի տակ և պաշար-  
ված Տուլայում : Ապստամբությունների նոր արևելքը  
հարավում և Մերձփոլյան յերկրում :

Լեհական նոր ավանտյուրան : Յերկրորդ ինքնա-  
կոչը : Լեհական նոր ջոկատների ներխուժումը Ռու-  
սաստան : Լեհերի անկարգությունները յերկրում : Պար-  
տիզանական պատերազմը լեհերի դեմ : Շույսկու դա-  
շինքը շվեդների հետ : Շույսկու տապալումը : Լեհերի  
պարթանագիրը ըսյարների հետ արքայազն Վլադիսլա-  
վին Մոսկվայի թագավոր ընտրելու մասին : Մոսկվայի  
զավթումը լեհերի կողմից 1610 թվին :

Ռուս ժողովրդի պայքարը լեհական հափշտակիչ-  
ների դեմ : Ժողովրդական շարժման վերելքը լեհերի  
դեմ :

Ապստամբությունը Մոսկվայում : Առաջին վեմտա-  
վային աշխարհագորքը : Կողմա Մինինը : Ժողովրդական  
բանակի ստեղծումը լեհերի դեմ պայքարելու համար :  
Իշխան Դեմիտրի Պոժարսկին : Մոսկվայի աղատումը  
լեհերից : Ռուս ժողովրդի հերոսական պայքարի նշա-  
նակությունը ինտերվենտների դեմ XVII դարի սկզբին :

2. ԻՆՏԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ  
XVII դ. (6 ժամ)

Նոր դիմաստիայի սկիզբը (Միխայիլ Ռոմանովի  
Էագավորությունը) : Միխայիլ Ռոմանովին զեմստովո-

յական ժողովում թագավոր ընտրելը : Պայքարն ին-  
տերվենտների դեմ : Մտորոմվյան հաշտությունը Շվե-  
դիայի հետ, Դեուլինյան զինադադարը Լեհաստանի  
հետ :

Ջեմսովոյական ժողովները : Նոր կառավարության  
ձորատարական քաղաքականությունը : Ջորքի կազ-  
մակերպումը :

Անհաջող պատերազմը Լեհաստանի դեմ : Ազովի  
գրավումը կազակների կողմից :

Ճորտատիրական սևտեալությունը XVII դ. կեսե-  
րին : Կոռային տնտեսության հիմնական դժեբը (Լե-  
նին) : Կարվածատիրական հողատիրության աճումը  
XVII դ. : Գյուղացիների դրությունը : Խոչոր ֆեո-  
դալի տնտեսությունը XVII դ. :

Արդյունաբերությունը և առևտուրը XVII դ. կե-  
սերին : Արհեստի զարգացումը : Առաջին մանուֆակ-  
տուրաները Մոսկովյան պետությունում : Ներքին և  
արտաքին առևտրի աճումը : Մանր շուկաների միա-  
ձուրվելը մեկ համառուսաստանյան շուկայի մեջ  
(Լենին) : Պայքար անդլիացիների և հոլանդացիների  
առևտրական մրցման դեմ : Արհեստավորների և մանր  
առևտրականների շահագործումը վաճառականների  
կողմից : Մոսկվա քաղաքը XVII դ. :

Ֆադաբային ապստամբությունները XVII դ. կե-  
սերին : Ժողովային որենսգիրքը : Ալեքսեյ ցարը :

Մորուզովի կառավարումը: Այլի վրա դրած հարկը: 1648 թ. ապստամբությունը Մոսկվայում և ուրիշ բազմաքանակներում: 1649 թ. ժողովային որենազիրքը:

Գյուղացիների վերջնական ճորտացումը:

Մոսկովյան պետութայան կառավարումը XVII դարում: Յարը: Ձեմստվոյական ժողովները: Բոյարական դուման:

Դիվանատները (պրիկազներ): Քաչքչուկները և կաշառակերությունը դիվանատներում: Զորապետները (վոեվոդները): Բանակը: Ստրելցյները:

Նիկոնի յեկեղեցական ռեֆորմը և պառակտումը: Նիկոն պատրիարքը: Յեկեղեցական ռեֆորմը: Նիկոնի պայքարը ցարի դեմ և Նիկոնի դատապարտումը: Բւզդափառ յեկեղեցու պառակտման սկիզբը: Պառակտվողականների (ուսուկոլնիկների) ռեակցիոն ուսմունքը: Պառակտվողականների հետապնդումը:

### 3. ՌԻԿՐԱԻՆԱՆ ՅԵՎ ԲԵԼՈՒՈՒՍԻԱՆ XVII Դ.

(3 ժամ) :

Ուկրաինացի և Բելոռուսիացի լեհական պաների լեյտանոսության ներքո XVI դ.—XVII դ.: սկզբում: Պանական հողատիրութայան աճումն Ուկրաինայում և Բելոռուսիայում: Գյուղացիութայան ճնշումը: 1596 թ. յեկեղեցական ունիան: Պայքարն ունիայի (միության) դեմ: «Յեղբայրությունները»: Քաղաքներն Ուկրաինայում: Ուկրաինական կազակությունը: Զապորոժյան Սեչը:

Ուկրաինական ժողովրդի պայքարը Լեհաստանի դեմ: Կազակային-գյուղացիական ապստամբությունները Ֆեոդալական շահագործման և լեհական տիրապետութայան դեմ: Բողզան իմեյնիցկին: Գյուղացիական պատերազմն Ուկրաինայում և Բելոռուսիայում 1648—1659 թվականներին: Մաքսիմ Կրիվոնոսը: Զրոտովյան պայմանագիրը: Պատերազմի վերջուկսումը Լեհաստանի դեմ: Բելոցերկովյան հաշտությունը: Ուկրաինական ժողովուրդի պատմական և կուլտուրական կապերը վելիկոռուսական ժողովուրդի հետ: Ուկրաինայի միակցումը Մոսկովյան պետությանը:

Մոսկովյան պետութայան պատերազմը Լեհաստանի դեմ Ուկրաինայի և Բելոռուսիայի համար: Լեհաստանի պարտությունը Մոսկովյան պետութայան դեմ մղված պատերազմում: 1667 թ. Անդրուսովյան ղինադադարը: Աջափնյա Ուկրաինան և Չախափնյա Ուկրաինան XVII դարում:

### 4. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻՔԻՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀՊԱՏԱԿԵՑՆԵԼԸ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ (1 ժամ) :

Նվեճիկները (տունդուսները), խակասները, կիրգիզները, բուրյաթները, յակուտները: Ռուսական կազակների և արդյունաբերողների շարժումն Արևելյան Սիբիր: Դեժնյովի արչավախտումը: Մարբարովի արչավանքը դեպի Ամուր: Ռուսների առաջին ընդհարումները Չինաստանի հետ: Ներչինսկու պայմանագիրը:

Նվաճված ժողովուրդները կողոպտումը: Ապստամբութեան թշուառները ուստական զորապետների (վեհապետների) ճնշման դեմ:

Ռուսական վերաբնակվածները Սիրիայում:

5. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVII Դ. ՅԵՐԿՐՈՐԴ ԿԵՍՈՒՄ (3 ժամ):

«Պղնձի խոսվածքները» Մոսկվայում 1662 թվականին:

Մերձվորյան ժողովուրդները XVII դ.: Բաշկիրախան: Կարմիրները: Բաշկիրները և Արևմտյան Սիրիայի ժողովուրդների ապստամբությունները 1662—1667 թվականներին: Սեխովյան ապստամբությունը:

Ժողովրդական ապստամբությունը Ստեփան Ռաֆինի առաջնորդությամբ: Դոնի կադակությունը և նրա շերտավորումը:

Ստեփան Ռաֆինը: Ռաֆինի պարսկական արշավանքը: Ապստամբությունը վոլգայի շրջանում: Մերձվորյան քաղաքների դրավումը: Գյուղացիական ապստամբությունները Մերձվորյան յերկրում: Կարմիրները, թաթարները, մորզավանները, մարինները (չերեմիս), չուվաշները և բաշկիրները մասնակցությունն ապստամբությանը:

Ռաֆինի պարտությունը Սիմբիրսկի տակ: Գյուղացիական ջոկատների պայքարը 1670 թ. վերջում: Ապստամբության ջախջախումը: Կառավարական տեսությունը:

6. ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ

XVII Դ. (1 ժամ):

Կապերն Արևմտյան Յեկրոպայի հետ: Ոտարյերկրացիները Մոսկովյան պետություն մեջ: Գերմանական արվարձանը: Արևմտյան ազդեցությունը տնային կենցաղում: Ուկրաինական կուլտուրայի ազդեցությունը: Այլընտրացիների թատրոնը: Ժողովրդական ստեղծագործությունը: Ռուսաստանի կուլտուրական հետամնացությունը համեմատած Արևմուտքի հետ:

7. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՐ ՅԵՎ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՆ XVI—

XVII ԴԱՐԵՐՈՒՄ (1 ժամ)

Անդրկովկասը թաթարական տիրապետությունից հետո:

Ֆեոդալական մասնատվածությունը: Թյուրքիայի և Իրանի պայքարն Անդրկովկասի համար: Ճորտատիրությունը վրաստանում XVII դ.:

Ուկրեկական խանությունները XVI—XVII դարերում:

Բուխարան և Խիվան: Քաղաքները:

ԱՄԲՈՂՋ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ

ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 15 ժամ:

## ԻՆՆԵՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

### ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«ԽՍՀՄ-ի պատմութեան» IX դասարանի դասընթացում պատմա-ժամանակագրական հաջորդականութեամբ ուսումնասիրվում են XVIII—XIX դ. դ. դեպքերը:

Այս շրջանը ԽՍՀՄ պատմութեան մեջ բաժանվում է յերկու շրջանի: XVIII դ. և XIX դ. առաջին կեսում ճորտատիրական իրավունքը հասնում և իր դադարինակետին և այնուհետև քայքայվում է: Այդ ժամանակ նրա ընդերքում հասունանում է նոր բուրժուական կարգը:

XIX դարի յերկրորդ կեսում, ճորտատիրական իրավունքի վերացումից հետո, կապիտալիզմը արագորեն զարգանում է, դոյանում է հասարակական նոր դասակարգ-պրոլետարիատը, վորը սկսում է իր պատմական պայքարը ինքնակալութեան և բուրժուազիայի դեմ: Անհրաժեշտ է ոգտագործել «Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացում» (եջ 168—170) բերած կապիտալիզմի բնութագրութեանն՝ իբրև ա-վելի առաջադիմական հասարակական Փորձացիայի Ֆեոդալիզմի համեմատութեամբ, միաժամանակ ցույց տալով, վոր «արտադրողական ուժերը վիթխարի չափերով զարգացնելով, կապիտալիզմը խճճվեց իր համար անլուծելի հակասութեաններով մեջ»:

XIX դ. վերջից—XX դ. սկզբից Ռուսաստանը դառնում է համաշխարհային հակասութեանների ողակ— «ամեն տեսակի ճնշման ոջախ եր— և՛ կապիտալիստական, և՛ դադութային, և՛ դինվորական ճնշման իր ամենավայրագ ու բարբարոսական ձևով» (Ստալին): Իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխութեանները զարաշրջանում Ռուսաստանը դառնում է բոլշևիզմի հայրենիք— նոր տիպի պրոլետարական կուսակցութեան հայրենիք, վորը ղեկավարում է բանվորների պայքարը սոցիալիզմի համար, պրոլետարիատի ղեկառուրայի համար:

«ԽՍՀՄ-ի պատմութեան» IX դասարանի դասընթացն իր առաջ խնդիր է դնում ուսումնասիրել Ֆեոդալա-ճորտատիրական կարգերից բուրժուա-կապիտալիստական կարգերին Ռուսաստանի անցման սոցիալանտեսական հարաբերութեանները բարդ հյուսվածքը— հյուսվածք, վորը վորոշեց յերկու սոցիալական պատերազմների առկայութեանը Ռուսաստանում (դյուզացիների պայքարը կալվածատերերի դեմ և պրոլետարիատի պայքարը քաղաքի և դյուզի բուրժուազիայի դեմ) և բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեանը հետագայում սոցիալիստականի վերաճելու հնարավորութեանը:

Հատուկ հողատարութեամբ պետք է ուսումնասիրել դյուզացիների պայքարը ճորտատիրական իրավունքի դեմ XVIII դարում և XIX դարի առաջին կեսում, իսկ XIX դ. յերկրորդ կեսից՝ պրոլետարիատի պայքարը ցարիզմի ու բուրժուազիայի դեմ: Ճնշված դասակարգերի պայքարի ուսումնասիրութեանը պետք

և աշակերտներին մեջ զխտակից սեր զարթնցնի գեպի ճնշվածները և զխտակից ատելություն՝ ղեպի ճնշողները: Դասընթացի ծրագրում մեծ տեղ է հատկացվում ստարերկրյա հարձակումներին աշխատավորության կողմից իր յերկիրը պաշտպանելու պատմության ուսումնասիրությանը (չվեղահան զավթողներին ջախջախելը ուստական և ուկրաինական յեղբայրական ժողովուրդներին միացյալ ուժերով, ուստական ժողովուրդի կողմից նապոլեոնական բանակի ջախջախումը և այլն): Իր անկախության և ազատության համար մըղած մեր յերկրի ժողովուրդներին պայքարի պատմությունը աշակերտներին մեջ պետք է զխտակից խորհրդային հայրենասիրություն դաստիարակի: Ժողովրդական մասսաների այդ սխրագործությունների պատերն անցյալում, ոգնում են յերիտասարդությանը պահել մոբիլիացիոն պատրաստականության մեջ պատերազմական հարձակման վտանգի հանդեպ, ղեպի վորը կոչ է անում ընկեր Ստալինը:

Ծրագրի մեջ մտցված է նույնպես և ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմությունը: Առանձնապես աչքի յեքնկնում ժողովուրդների հերոսական պայքարն իրենց ազատության համար ցարիզմի կողմից նրանց նվաճելու շրջանում և ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը, վորոնք արթնանում էին կապիտալիզմի դարդացման աղղեցության տակ: Դասընթացում մեծ տեղ պետք է զբաղի դյուրացիական պատերազմը Յեմ. Պուգաչովի ղեկավարությամբ՝ XVIII դ. կալվածատերերի դեմ, վորում միացան Ուրալի և Մերձվոլգյան շրջանի ժողովուրդները և առանձնապես ակտիվ մասնակցություն ունե-

ցան Ուրալի լեռնագործ բանվորները, վորոնք նույնպես գանվում էին ճորտատիրական լծի տակ:

Ծրագրում ընդդժված է ճնշված ժողովուրդների, բանվորների ու դյուրացիների պայքարը՝ ուստական պրոլետարիատի հետ միասին և նրա ղեկավարությամբ, վորն ուղղված էր ցարիզմի և կապիտալիզմի դեմ: ԽՍՀՄ ժողովուրդների պատմության ամբողջ նյութերը յերիտասարդության մեջ զխտակից պրոլետարական ինտերնացիոնալիզմ է դաստիարակում և խոր հարգանք ղեպի ԽՍՀՄ-ի ժողովուրդներին կուլտուրան:

ԽՍՀՄ-ի պատմությունը զխափում է վորպես համաշխարհային պատմության անբաժանելի մի մասը: Բոլոր պատմական պրոցեսները, վորոնք ուսումնասիրվում են ԽՍՀՄ-ի պատմության դասընթացում (ճորտատիրական կարգերի դարդացումն ու քայքայումը, կապիտալիզմի դարդացումը, պրոլետարիատի գասակազային պայքարը և այլն), նման են համալսարանական նույնպիսի պրոցեսներին, վորն արդեն անցել են IX դասարանի աշակերտները:

